

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

### ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2017թ. ապրիլի 25-ի նիստի

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 34-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Ս.Սուջանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվերակության դրեց օրակարգը, որը միաձայն ընդունվեց (օրակարգը կցվում է):

#### ՕՐԱԿԱՐԳ

1. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. դոկտոր Վահե Ենգիբարյանին պրոֆեսորի գիտամանկավարժական կոչում շնորհելու մրցույթին մասնակցության երաշխավորության հարց:
2. Սահմանադրական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ պրոֆ. Գ.Դանիելյան):
3. 2016-2017 ուսումնական տարվա պետական քննությունների արդյունքների ամփոփում (զեկ.՝ պետական քննական հանձնաժողովների նախագահներ):
4. Իրավաբանական կլինիկայի տնօրենի տարեկան հաշվետվությունը՝ կատարված աշխատանքների մասին (զեկ.՝ Իրավաբանական կլինիկայի տնօրեն Ք.Վարդանյան):
5. Ուսանողական գիտական ընկերության նախագահի հաղորդումը՝ կատարված աշխատանքների մասին (զեկ.՝ ՈՒԳԸ նախագահ Տ.Դադունց):
6. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. դոկտոր Վահե Ենգիբարյանին պրոֆեսորի գիտամանկավարժական կոչում շնորհելու մրցույթին մասնակցության երաշխավորության հարց:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ, պրոֆ. Ս.Դիրանոյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են պրոֆեսորի գիտամանկավարժական կոչում շնորհելու համար ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց Քրեական դատավարության և

կրիմինալիստիկայի ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Վ.Ստեփանյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

Խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. դոկտոր Վահե Ենգիբարյանին շնորհել պրոֆեսորի գիտամանկավարժական կոչում:

**2. ԼՍԵՑԻՆ.** Սահմանադրական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ պրոֆ. Գ.Դանիելյան):

Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆ. Գ.Դանիելյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում քրեական իրավունք ամբիոնի ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

**3. ԼՍԵՑԻՆ.** 2016-2017 ուսումնական տարվա պետական քննությունների արդյունքների ամփոփում (զեկ.՝ պետական քննական հանձնաժողովների նախագահներ):

Պետական քննական հանձնաժողովների նախագահները հակիրճ ներկայացրին քննական հանձնաժողովների արդյունքները, իրենց դիտողություններն ու առաջարկությունները քննությունների կազմակերպման և անցկացման կարգի վերաբերյալ:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաղորդումներն ընդունել ի գիտություն (հաշվետվությունները կցվում են):

**4. ԼՍԵՑԻՆ.** Իրավաբանական կլինիկայի տնօրենի տարեկան հաշվետվությունը՝ կատարված աշխատանքների մասին (զեկ.՝ Իրավաբանական կլինիկայի տնօրեն Ք.Վարդանյան):

Իրավաբանական կլինիկայի տնօրեն Ք.Վարդանյանը ներկայացրեց կլինիկայի տարեկան հաշվետվությունը՝ կատարված աշխատանքների մասին և ապագա ծրագրերի մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

**5. ԼՄԵՑԻՆ.** Ուսանողական գիտական ընկերության նախագահի հաշվետվությունը՝ կատարված աշխատանքների մասին (զեկ.՝ ՈՒԳԸ նախագահ Տ.Դադունց):

Ուսանողական գիտական ընկերության նախագահ Տ.Դադունցը ներկայացրեց ՈՒԳԸ տարեկան հաշվետվությունը՝ կատարված աշխատանքների և ապագա ծրագրերի մասին:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

**6. Ընթացիկ հարցեր**

**6.1 ԼՄԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Տիգրան Ղազարյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը, դոց. Ս.Մեղրյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տիգրան Ղազարյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 55 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 9 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 26 կրեդիտ հետազոտական աշխատանքից՝ ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**6.2 ԼՄԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Սահմանադրական իրավունքի ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Տիգրան Նաղդալյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը, դոց. Ս.Մեղրյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2017 թվականի մայիսի 26-ին Սահմանադրական իրավունքի ամբիոնի նիստում քննարկվել է ասպիրանտի թեկնածուական ատենախոսությունը՝ ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**6.3 ԼՄԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Սահմանադրական իրավունքի ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Կարեն Հակոբյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը, դոց. Ս.Մեղրյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

#### **ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կարեն Հակոբյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 67 կրեդիտ, ներառյալ՝ 5 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 9 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 4 կրեդիտ պրակտիկայից, 49 կրեդիտ հետազոտական աշխատանքից՝ ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**6.4 ԼՄԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քաղաքացիական դատավարության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Լիլիթ Պետրոսյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը, դոց. Ս.Մեղրյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

#### **ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լիլիթ Պետրոսյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 61 կրեդիտ՝ ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**6.5 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Հայկ Հարությունյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը, դոց. Ս.Մեղրյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

#### **ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայկ Հարությունյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 44 կրեդիտ, ներառյալ՝ 5 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 5 կրեդիտ պրակտիկայից, 34 կրեդիտ հետազոտական աշխատանքից՝ ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**6.6 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քաղաքացիական իրավունքի ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Սիրո Ամիրխանյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը, դոց. Ս.Մեղրյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

#### **ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սիրո Ամիրխանյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 58 կրեդիտ, ներառյալ՝ 22 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 6 կրեդիտ պրակտիկայից, 30 կրեդիտ հետազոտական աշխատանքից՝ ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**6.7 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քաղաքացիական իրավունքի ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Գևորգ Պողոսյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը, դոց. Ս.Մեղրյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գևորգ Պողոսյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 73 կրեդիտ՝ ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**6.8 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քաղաքացիական իրավունքի ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Սովսես Խաչատրյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը, դոց. Ս.Մեղրյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սովսես Խաչատրյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 113 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 15 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 4 կրեդիտ պրակտիկայից, 74 կրեդիտ հետազոտական աշխատանքից՝ ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**6.9 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Քաղաքացիական իրավունքի ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Արսեն Հովհաննիսյանի ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը, պրոֆ. Վ.Ավետիսյանը, դոց. Ս.Մեղրյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը, պրոֆ. Ա.Գաբուզյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արսեն Հովհաննիսյանի թեկնածուական ատենախոսությունը երաշխավորվել է պաշտպանության Քաղաքացիական իրավունքի ամբիոնի՝ 2017 թվականի մայիսի 19-ի նիստում՝ ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**6.10 ԼՍԵՑԻՆ.** Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի միջազգային և եվրոպական իրավունքի ամբիոնի հայցորդ Սոնա Մանթաշյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Վ.Ստեփանյանը, դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:

#### **ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի միջազգային և եվրոպական իրավունքի ամբիոնի հայցորդ Սոնա Մանթաշյանի՝ «Հայաստանի տարածքային շահերին վերաբերվող XX դարի սկզբին ստորագրված պայմանագրերի վավերականության խնդիրը» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.06 - «Միջազգային իրավունք»:

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Վ.Հովհաննիսյանին:

**6.11 ԼՍԵՑԻՆ.** Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի միջազգային և եվրոպական իրավունքի ամբիոնի ասպիրանտ Էդգար Մեյրոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Վ.Ստեփանյանը, դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:

#### **ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի միջազգային և եվրոպական իրավունքի ամբիոնի ասպիրանտ Էդգար Մեյրոյանի՝ «Անդրսահմանային ջրային ռեսուրսների միջազգային իրավական կարգավորման հիմնահարցերը» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.06 - «Միջազգային իրավունք»:

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Վ.Քոչարյանին:

**6.12 ԼՍԵՑԻՆ.** Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հայցորդ Ռոմելա Մանուկյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Պրոֆ. Վ.Ստեփանյանը, դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել ամբիոնի հայցորդ Ռոմելա Մանուկյանի՝ «Արտասահմանում գտնվող օտարերկյա ռազմական բազաների միջազգային իրավական կարգավիճակը» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.06 - «Միջազգային իրավունք».

**Բ.** Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Վ.Հովհաննիսյանին.

**Գ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

**6.13 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ Դ.Սերոբյանի՝ «ՀՀ Քաղաքացիական իրավունք: Պարտավորական իրավունք» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը՝ որպես էլեկտրոնային գիրք, հրատարակման երաշխավորելու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ Դ.Սերոբյանի՝ «ՀՀ Քաղաքացիական իրավունք: Պարտավորական իրավունք» վերտառությամբ ուսումնական ձեռնարկը՝ որպես էլեկտրոնային գիրք, երաշխավորել հրատարակման:

**6.14 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի միջնորդությունը Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ Ռ.Գրիգորյանի՝ «Պարտատոմսերի շրջանառության իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանը, դոց. Ա.Մարգարյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը՝ Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ Ռ.Գրիգորյանի՝ «Պարտատոմսերի շրջանառության իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ մենագրությունը երաշխավորել տպագրության:

*Խորհրդի նախագահ*

*Գ. Ղազինյան*

*Խորհրդի քարտուղար*

*Տ.Սուջյան*



**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
**2016-2017 ու. տարի**  
**Սահմանադրական իրավունքի ամբիոն**

**Ամբիոնի կազմը**

***Ամբիոնի վարիչ՝***

Դանիելյան Գևորգ Բալաբեկի, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

***Պրոֆեսորադասախոսական կազմը՝***

- 1) Այվազյան Նորիկի Անուշավանի, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
- 2) Այվազյան Վարդան Նորիկի, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ,
- 3) Եղյան Ռաֆայել Հակոբի, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ,
- 4) Մուրադյան Սամվել Վիլիկի, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ:

***Համատեղողներ***

- 1) Թամազյան Արամ Արծվիի, իրավ. գիտ. դոկտոր,
- 2) Հարությունյան Գագիկ Գարուշի, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,
- 3) Մախմուդյան Ռուստամ Զասմի, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ,
- 4) Մանասյան Անահիտ Արտյոմի, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ,
- 5) Ենգոյան Հասմիկ Ալեքսանդրի, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ,
- 6) Շաթիրյան Էդգար Էդուարդի, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ,
- 7) Մուղնեցյան Գնել Սամվելի, իրավ. գիտ. թեկնածու, ասիստենտ,
- 8) Ռաֆայելյան Վահե Վարուժանի իրավ. գիտ. թեկնածու, ասիստենտ,
- 9) Սարոյան Պարզև Վոլոդյայի, իրավ. գիտ. թեկնածու, ասիստենտ,
- 10) Նաղդալյան Տիգրան Գրիգորի, դասախոս
- 11) Սարգսյան Մերի Մնացականի, դասախոս:

***Ուսումնասօժանդակ աշխատակիցներ***

- 1) Ղազարյան Անահիտ Արտեմի, ավագ լաբորանտ,
- 2) Սարգսյան Մերի Մնացականի, ավագ լաբորանտ:

***Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտահետազոտական աշխատանքները***

***Ուսումնասեթողական աշխատանքներ:***

Ամբիոնի կողմից ուսումնասեթողական աշխատանքներն իրականացվել են ուսումնական գործընթացին առնչվող իրավական ակտերի պահանջներին և սահմանված ուսումնական ծրագրերին համապատասխան: Հաշվետու ժամանակահատվածում վերանայվել ու ժամանակակից մեթոդաբանության պահանջներին են համապատասխանեցվել 2 դասընթացների ծրագրեր ու քննական հարցաշարեր՝ հաշվի առնելով այն, որ դրանք անմիջականորեն առնչվում են օրենսդրության այն ճյուղերին, որոնցում կատարվել են էական փոփոխություններ: Նշված ոլորտում ամբիոնի գործունեության առանձնահատկություններից է այն, որ առանձին առարկաներ դասավանդվում են համալսարանի մի շարք ֆակուլտետներում. Ժուռնալիստիկայի, միջազգային հարաբերությունների, աշխարհագրության, քաղաքագիտության, տնտեսագիտության, ինչը հիմք է տալիս, որպեսզի ամբիոնում դասընթացների ծրագրերը կազմվեն ու իրացվեն՝ հաշվի առնելով նաև այդ լսարանների էական առանձնահատկությունները: Ընդ որում, այդ կտրվածքով իրականացված գործունեության առնչությամբ ստացվել են դրական արձագանքներ: Առաջիկայում նախատեսվում է ծրագրերից ու հարցաշարից զատ, վերանայել նաև դասավանդվող նյութը. այս փուլում դեռևս հիշյալ ֆակուլտետներին տրվում է ընդհանուր կարգով մշակված նյութը, պարզապես հստակեցվում է, թե դրա որ մասն է իրենց ծրագրին առնչվում:

Բոլոր դեպքերում, յուրաքանչյուր ուսումնական տարի դասավանդման նյութը թարմացվում է էլեկտրոնային տարբերակով և դասախոսությունների թեզիսների տեսքով զետեղվում ֆակուլտետի կայքում, ինչը հնարավորություն է տալիս ուսանողներին իրազեկված լինել դասավանդվող առարկային առնչվող օրենսդրության փոփոխությունների և տեսական մտեցումների վերանայման մասով: Այս տեսանկյունից ամբիոնի ծանրաբեռնվածությունը անհամեմատ մեծ է, քանի որ սահմանադրական փոփոխություններին զուգահեռ աննախադեպ հարափոփոխ են դարձել գործադիր իշխանության կազմավորման ու գործունեության իրավական հիմքերի փոփոխությունները: Ստացվում է այնպես, որ մենք այդպիսի փոփոխություններ ենք արձանագրում անգամ տարեկան երկու-երեք անգամ: Այս իրավիճակում նախապատվությունը տալիս ենք ուսանողներին՝ հիշյալ ոլորտին առնչվող առավել առանցքային հարցադրումների լուսաբանմանը:

Ամբիոնի կողմից դասավանդվող առարկաներից միայն «Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք» դասընթացի առնչությամբ դեռևս չի պատրաստվել մայրենի լեզվով համապատասխան ուսումնական ձեռնարկ: Տվյալ դեպքում հաշվի է առնվում այն, որ առարկան ինքնին որևէ կերպ չի առնչվում հայրենական իրավական համակարգի հետ, և, բացի այդ, կան էլեկտրոնային եղանակով մշակված դասախոսություններ: Այս դասընթացի պատասխանատու Վ. Այվազյանի կողմից հիշյալ նյութերի հիման վրա նախատեսվում է ուսումնական ձեռնարկի թողարկում: Միաժամանակ, հաշվի առնելով սոցիոլոգիական հարցումների արդյունքների ամփոփմամբ դեկանատի նիստում կայացած որոշումը, ամբիոնում ևս որոշվել է հստակեցնել այն աղբյուրների շրջանակը, որոնք առավել մեծ չափով են համապատասխանում ներկայացվող ծրագրի բովանդակությանը և հնարավորություն կտան ապահովելու դասավանդվող նյութի որոշակի միասնականություն:

Հաշվի առնելով հանրային ծառայության առնչությամբ հանրային մեծ պահանջարկը, այդ թվում՝ «իրավագիտություն» մասնագիտություն դասավանդող մյուս բուհերի կողմից, ներկայումս նախապատրաստական աշխատանքներ են ընթանում «Հանրային ծառայություն» դասագրքի պատրաստման ուղղությամբ:

Ամբիոնը ձեռնամուխ է եղել մի շարք առարկաներով խնդիրներ մշակելու և դրանցով միջանկյալ քննություններ անցկացնելու աշխատանքներին: Արդեն մեծ քանակ են կազմում «Սահմանադրական իրավունք», «Վարչական իրավունք», «Ֆինանսական իրավունք», «Բանկային իրավունք» առարկաներին առնչվող մշակված և որոշակի կիրառման փորձ անցած խնդիրները, ինչը հնարավորություն է տալիս ծրագրավորելու առաջիկա մեկ-երկու տարիների ընթացքում խնդիրների ժողովածուների թողարկումը: Այս փուլում քննարկում ենք առաջին փուլում հրատարակել միայն մեկ ժողովածու, որում կներառվեն վերը նշված առարկաներին վերաբերող խնդիրները: Հետագայում, երբ կկուտակվի բավարար նյութ, կարող ենք նախապատվությունը տալ առարկայական ձեռնարկներին: Միաժամանակ, այս փուլում կազմվող ձեռնարկի ներքին տրամաբանական կառուցվածքն ապահովելու նկատառումով, փորձում ենք ներառել միայն այնպիսի խնդիրներ, որոնք այս կամ այն չափով առնչվում են հարակից դասընթացների նյութի հետ:

Դեռևս անցյալ տարվա հաշվետվությամբ արձանագրել էինք, որ ըստ ուսանողների արձագանքի, մշակված խնդիրները համեմատաբար բարդ էին, ինչը հաշվի առնելով, հաշվետու տարում հնարավորինս վերանայել ենք դրանք՝ դարձնելով առավել գործնական ուղղվածության: Մյուս կողմից, խնդիրների լուծման գործընթացը հնարավորինս ողջամիտ դարձնելու նկատառումով նախապես ուսանողներն իրազեկվում են այն օրենսդրական նորմերի մասին, որոնց հենքով մշակված են խնդիրները: Այս դեպքում հաշվի է առնվում այն առանձնահատկությունը, որ ամբիոնի կողմից կազմակերպվող դասընթացներն առնչվում են անհամեմատ լայն շրջանակներ ընդգրկող օրենսդրական ու ենթաօրենսդրական ակտերի հետ, որոնք գործնականում ամբողջությամբ յուրացնել հնարավոր չէ, և դրա կարիքն էլ չկա: Վերջերս մենք հարցումներ ենք անցկացրել ուսանողների շրջանում և պարզել, որ խնդիրների

բարդության աստիճանը սկզբունքորեն համարժեք է նրանց ստացած գիտելիքներին և ունակություններին:

Խնդիրներ են մշակվել նաև «Սահմանադրական իրավունք» առարկայից, որոնք առայժմ, դեկանատի նիստում կայացված որոշման համաձայն, կօգտագործվեն բացառապես պետական ավարտական քննությունների ընթացքում՝ բանավոր լրացուցիչ հարցերի տեսքով, սակայն հետագայում նախատեսվում է դրանք լրամշակել և ներառել ինչպես միջանկյալ քննությունների, այնպես էլ պետական ավարտական քննությունների ծրագրերում:

Լրացուցիչ վերանայվել են պրակտիկայի ծրագրերը. դրանք ոչ միայն համապատասխանեցվել են գործող օրենսդրությանը, այլև հաստատվել են ենթածրագրեր՝ հաշվի առնելով յուրաքանչյուր գերատեսչության առանձնահատկությունները: Կարծում եմ, նոր ծրագրերն առավել դյուրին ու կանխատեսելի կդարձնեն պրակտիկայի իրականացումը:

Ամբիոնի դասախոսներից 3-ը (Գ.Մուղնեցյան, Գ.Դանիելյան, Վ.Այվազյան, Հ.Ենգոյան) տարբեր ժամանակներում ընդգրկված են եղել հանրային ծառայողների վերապատրաստման դասընթացներում: Իսկ Գ.Դանիելյանը և Վ.Այվազյանը ներգրավված են նաև պրոֆեսորասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրերով նախատեսված դասախոսություններին: Մասնավորապես, իմ կողմից ներկայացվել է «Մարդու իրավունքների իրավական հիմքերի էվոլյուցիան՝ սահմանադրական փոփոխությունների համատեքստում» թեման: Առաջիկայում ևս ծրագրավորված են այդպիսի դասընթացներ:

Ամբիոնում բոլոր ավարտական աշխատանքների պատրաստման գործընթացը գտնվում է ինչպես անմիջական ղեկավարի, այնպես էլ ամբիոնի վարիչի հսկողության ներքո: Անհատական ժամանակացույցով իրականացված հանդիպումների ընթացքում կազմակերպվում են քննարկումներ, տրվում է համապատասխան խորհրդատվություն և ստուգվում կատարված աշխատանքը: Մեծ ուշադրություն է դարձվում նաև ընդդիմախոսությունների որակի վրա, մասնավորապես, ներկայացվող պահանջներին չբավարարող եզրակացությունները ետ են վերադարձվել՝ կոնկրետ դիտողություններով:

Ինչպես դասախոսությունների, այնպես էլ սեմինար պարապմունքների կազմակերպման գործընթացում ձախողումներ չեն արձանագրվել, իսկ ոչ էական շեղումները դարձել են համապատասխան կարգով քննարկման նյութ: Ընդհանուր առմամբ ամբիոնի դասախոսական կազմն առանձնանում է կարգապահությամբ և ամբիոնում անհրաժեշտ աշխատանքային մթնոլորտ ձևավորելու ձգտումներով:

Սեմինար պարապմունքներում ներդրվել է մշակված խնդիրներին իրենց բովանդակությամբ մոտ խնդիրներ քննարկելու և լուծումներ առաջադրելու, ինչպես նաև թեմային առնչվող տվյալ պահին հասարակական մեծ հնչեղություն ձեռք բերած իրավական բնույթի իրավիճակների, այդ թվում՝ վիճահարույց օրենսդրական դրույթների համակողմանի վերլուծության պրակտիկան:

Ինչպես հայտնի է, առաջիկա ուսումնական տարում հանրային իրավունքի մասնագիտացմամբ վերականգնվում է մագիստրոսական ծրագիրը, ինչը առաջադրում է նոր խնդիրներ, և, կարծում եմ, նախապատրաստական աշխատանքները համակարգված են ընթանում: Մասնավորապես, թարմացվում են ծրագրերը, հստակեցվել են դասավանդվող առարկաների շրջանակը, գիտագործնական ունակություններ զարգացնելուն միտված ուսումնական մեթոդները և այլն:

Ամբիոնում դեկանատի աջակցությամբ ավանդույթի ուժով քննարկումներ են կազմակերպվում օտարերկրյա սահմանադրագետների մասնակցությամբ, ինչը ողջունելի նախաձեռնություն է: Այսպես, ս.թ. հունիսի 2-ին սահմանադրական իրավունքի ամբիոնում տեղի ունեցավ «Արգենտինայի սահմանադրական համակարգի առանձնահատկությունները» թեմայով քննարկում՝ Բուենոս Այրեսի համալսարանի սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, Փաստաբանների դպրոցի տնօրենի տեղակալ Դիեգո Դոլաբոյանի հետ:

Ամբիոնում, հիմնականում, լուծված է միևնույն դասընթացը առնվազն երկու դասախոսներով դասավանդելու խնդիրը:

**Գիտահետազոտական ուղղվածությամբ հրատարակություններ:**

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից հրատարակվել է ընդհանուրը 21 գիտական աշխատանք (նախատեսված է եղել 15-ը): Լրամշակվել և վերահրատարակվել է «ՀՀ մունիցիպալ իրավունք» ուսումնական ձեռնարկը, հրատարակվել է «Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք» դասագրքի 2-րդ մասը, հրատարակվել է մեկական մենագրություն, ուսումնական ձեռնարկ և ուսումնամեթոդական ձեռնարկ: Թեպետ նախատեսված էր ավարտին հասցնել «Ֆինանսական իրավունք» ուսումնական ձեռնարկը, սակայն այն հետաձգվեց, քանի որ Ազգային ժողովում հետաձգվում էր նաև ՀՀ հարկային օրենսգրքի ընդունումը: Այժմ այդ խնդիրը լուծելու ճանապարհին խոչընդոտ չկա, ուստի հաջորդ հաշվետու տարում, մասնավորապես՝ մինչև 2017 թ. դեկտեմբերը հիշյալ ուսումնական ձեռնարկը պատրաստ կլինի:

Ամբիոնի անդամները զեկույցներով մասնակցել են միջազգային և հանրապետական մի շարք գիտաժողովների: Մասնավորապես, կարելի է առնձանցնել՝

- 2016թ. նոյեմբերի 25-26-ին «Եվրասիական մարտահրավերներ» 3-րդ միջազգային խորհրդաժողովը՝ ՌԴ-ի Սանկտ-Պետերբուրգ քաղաքում, 2017թ. փետրվարի 19-22 – պաշտոնական այց Գերմանիայի Սահմանադրական դատարան,
- 2017թ. մայիսի 14-18-ին ԵՊՀ-ի և Մոնպելյեի Պոլ Վալերի համալսարանի միջև համագործակցության 30-ամյակին նվիրված գիտաժողովը, Ֆրանսիայի Մոնպելյե քաղաքում,
- 2017թ. մայիսի 25-27-ին պաշտոնական այցը Ուկրաինայի Դասիազության դպրոց և այլն:

Մասնավորապես, Հ. Ենգոյանը, Ա. Մանասյանը և Գ. Մուղնեցյանը մասնակցել են ՀՀ անկախության 25-ամյակին (15-ը դեկտեմբերի 2016) նվիրված՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի կողմից նախաձեռնած գիտաժողովին: Ինքս, վարչարարության արդի հիմնախնդիրների լուծման հիմնարար ուղիների վերաբերյալ զեկույցներով մասնակցել եմ 2 միջազգային գիտաժողովների՝ Ալմա-Աթայում և Ժնևում:

Ինչևէ, այս ոլորտում աշխատանքներն արմատական բարելավման կարիք ունեն, քանզի տեսադաշտից դուրս են մնացել խիստ արդիական մի շարք հարցադրումներ, որոնց ամբիոնի գիտական ներուժը, կարծում եմ, ունակ կլիներ համարժեք արձագանքելու:

Ներկայումս դեկան պարոն Ղազինյանի նախաձեռնությամբ կազմում ենք աշխատանքային ծրագիր՝ ՌԴ կառավարությանն առընթեր օրենսդրության համակարգման և հանրային կառավարման ինստիտուտի հետ՝ ընդհանուր վարչական իրավունքի դասագրքում՝ Հայաստանի վարչական իրավունքին վերաբերող հատված ներառելու առնչությամբ:

Ինչևէ, ստորև ներկայացված են գիտահետազոտական աշխատանքների արդյունքները՝ թվային տեքստով՝

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկույցներ, թեզիսներ
1	1		1	17	7

**Գիտամանկավարժական կադրերի պատրաստման ուղղությամբ կատարված աշխատանքներ:**

Ամբիոնում իրենց հետազոտական աշխատանքներն են իրականացնում թվով 9 ասպիրանտ (որոնցից 4-ը՝ հեռակա) և 1 հայցորդ: Հաշվետու տարում ամբիոնի ասպիրանտներ Պ. Սարոյանը և Մ. Սարգսյանը պաշտպանել են թեկնածուական

ատենախոսությունները, ասպիրանտ Տիգրան Նադդայանի թեկնածուական ատենախոսությունը ամբիոնի կողմից երաշխավորվել է պաշտպանության, իսկ ասպիրանտ Արտաշես Խալաթյանի ատենախոսությունը քննարկման փուլում է:

2016 թ. դեկտեմբերի 13-ին տեղի է ունեցել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների տարեկան գիտական նստաշրջանը, որտեղ զեկույցով հանդես են եկել սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ Կարեն Հակոբյանը՝ «Գրավոր վարչական ակտերի հիմնավորման պահանջը՝ որպես պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրատարր» թեմայով, ասպիրանտ Տաթևիկ Նահապետյանը՝ «Հանրագիրը՝ որպես մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանության ինստիտուտ» թեմայով: 2017թ. հրատարակված ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածուում հրատարակվել են ասպիրանտներ Կարեն Հակոբյանի «Գրավոր վարչական ակտերի հիմնավորման պահանջը՝ որպես պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրատարր», Տաթևիկ Նահապետյանի «Հանրագիրը՝ որպես մարդու իրավունքների վարչաիրավական պաշտպանության ինստիտուտ» և Հասմիկ Սարգսյանի «Հանրային իրավական դրամական պահանջների կատարման արդի հիմնահարցերը» հոդվածները:

#### ***Ուսանողության հետ տարվող աշխատանքը:***

Հաշվետու տարում նկատվել է ամբիոնի կողմից դասավանդվող առարկաներով գիտական աշխատանքներ գրելու գործընթացի նկատելի աշխուժացում: Այսպես, նշված ժամանակահատվածում «Իրավունքի արդի հիմնախնդիրները» թեմայով ֆակուլտետի ՌԻԳԸ տարեկան գիտական նստաշրջանին (10 մայիսի, 2017) մասնակցել են բակալավրիատի 4 ուսանողներ՝ Էլինա Գեղամյանը, Տաթև Սարտիրոսյանը, Վիկտորիա Հակոբջանյանը և Կլարա Գրիգորյանը:

Սա մեզ համար ողջունելի դրական տեղաշարժ է, հաշվի առնելով, որ տևական ժամանակ ուսանողները հազվադեպ էին ընտրում թեմաներ հանրային իրավունքից, սակայն, կարծում եմ, այս ոլորտում սրանք դեռևս բավարար ցուցանիշներ չեն: Կարծում եմ, հետագայում այս հարցում մեր նախաձեռնությունն արդյունքներ կտա:

Ուսանողության հետ տարվող աշխատանքը կազմակերպվում է մի քանի ուղղություններով, որոնցում աստիճանաբար մեծ տեղ է հատկացվում արդիական ու հրատապ հարցադրումներով գիտական բանավեճեր կազմակերպելուն: Տարբեր ձևաչափերով (խնդիրների հակողմանի քննարկումներ, բանավեճեր, դատախաղեր, այլ կառույցների մասնագետների հետ հանդիպումներ և այլն) կազմակերպվել է այդ բնույթի 7 միջոցառում:

Ուսանողական ՌԻԳԸ-ն ևս այս հարցում նախաձեռնողական կեցվածք ունի: Մասնավորապես, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծի հայեցակարգային դրույթները» թեմայով սեմինարի գաղափարն ամբողջովին իրենցն է եղել:

Ամբիոնի աջակցությամբ ուսանողները մասնակցել են «Միջազգային իրավունքի հայկական ասոցիացիայի» կողմից կազմակերպված «ՀՀ Սահմանադրության երկրորդ գլխում ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների գործնական իրացման ներկա վիճակը և հետագա բարելավման խնդիրը» վերտառությամբ սեմինարին:

#### ***Գիտահետազոտական աշխատանքներում համագործակցության եղանակները, արտահամայնարանական աշխատանքները:***

Գիտահետազոտական հարցադրումներով ամբիոնը համագործակցում է ինչպես միջազգային կառույցների, այնպես էլ որոշակի փորձ ունեցող մի շարք հասարակական կազմակերպությունների հետ: Ինչպես արդեն ասվեց, ֆակուլտետի ղեկավարության աջակցությամբ սկիզբ է առել նաև Գերմանիայի և Ֆրանսիայի ուսումնական հաստատությունների հետ համագործակցության գործընթաց:

Հաշվետու տարում ամբիոնի մի շարք դասախոսներ և ասպիրանտներ (Գ. Դանիելյանը, Է. Շաթիրյանը, Ա. Մանասյանը, Ն. Ղազարյանը) ներգրավվել են ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի՝ «Տնտեսության և էկոլոգիայի ոլորտներում կառավարման բարելավման» ծրագրի աշխատանքներին: Նշված ծրագրի շրջանակներում աշխատանքների 1-ին փուլն ավարտվել էր դեռևս 2015 թ. դեկտեմբերին և հրատարակվել էր նշված ոլորտում վարչարարության բարելավմանն ուղղված մեթոդական ուղեցույց, իսկ այս փուլում մենք հանդես եկանք մի շարք օրենսդրական ակտերի նախագծերով, որոնց գերակշիռ մասը ներկայումս ընդունվել է: Հայտնի պատճառներով (ԵԱՀԿ-ի Երևանյան գրասենյակի լուծարում) հիշյալ աշխատանքները դադարեցվել են:

Ամբիոնի վարիչ Գ.Դանիելյանը Եվրախորհրդի Երևանյան գրասենյակի հետ կնքած պայմանագրի համաձայն, շարունակել է «Հայաստանի Հանրապետության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նախագծի լրամշակման հանձնաժողովի համակարգման» աշխատանքները: Այդ հանձնաժողովում ընդգրկված է նաև ամբիոնի ասիստենտ Գ.Մուղնեցյանը և հայցորդ Ռ.Հակոբյանը: Ծրագիրն ընդգրկված է «Հայաստանի արդարադատության համակարգի անկախության, պրոֆեսիոնալիզմի և հաշվետվողականության ամրապնդումը» ընդհանուր ծրագրի մեջ: Ծրագրով նախատեսված աշխատանքների 1-ին փուլը ավարտվել է 2015թ. նոյեմբերի 30-ին, իսկ վերջնական փուլը՝ 2016 թ. օգոստոսի 1-ին: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այդ նախագծի առնչությամբ գերատեսչությունների միջև առկա խիստ տարաձայնությունները, ՀՀ արդարադատության նախարարության, Եվրախորհրդի Երևանյան գրասենյակի հետ որոշվել է սկսել լրամշակման ևս մեկ փուլ, որն ավարտին կհասցվի ս.թ. նոյեմբերին 1-ին:

2016 թ. հուլիսի 23-ին ամբիոնի երեք դասախոսներ (Գ.Դանիելյան, Վ.Այվազյան և Հ.Ենգոյան) և Սահմանադրական դատարանի երկու դատավորների (Ա.Գյուլումյան և Հ.Նազարյան) մասնակցությամբ դարձյալ Եվրախորհրդի Երևանյան գրասենյակի հետ կնքել են պայմանագիր՝ Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների համակարգման, դրանց կատարման և ՄԻԵԴ-ի որոշումների հետ համեմատական վերլուծություն իրականացնելու հարցադրումներով: Ծրագրի համակարգման պատասխանատվությունը վերապահված է ամբիոնի վարիչին: Ծրագրի 1-ին փուլը նախատեսված ժամկետում՝ 2016 թ. նոյեմբերի 30-ին, ավարտվել է, իսկ 2017թ. հուլիսի 1-ից կմեկնարկի ծրագրի հաջորդ փուլը, որն առավելապես նվիրված կլինի ՄԻԵԴ-ի և Սահմանադրական դատարանի որոշումների համեմատական վերլուծությանը: Սա, թերևս, աննախադեպ ու, մեր կարծիքով, հրատապ ու արդիական հետազոտություն է ոչ միայն հայրենական իրավագիտության, այլև միջազգային կտրվածքով: Այդպիսին է նաև Եվրախորհրդի Ստրասբուրգյան փորձագետների դիրքորոշումը, որոնց քննարկմանն էր ներկայացվել մեր կողմից առաջադրված ծրագիրը:

Ծրագրի առաջին փուլի արդյունքները պատվիրատու կազմակերպության և միջազգային փորձագետների կողմից ճանաչվել է լավագույններից մեկը:

Ամբիոնի երկու աշխատակիցների (Գ. Դանիելյան և Ն. Ղազարյան) մասնակցությամբ ներկայումս աշխատանքներ են իրականացվում՝ «Հայ համայնքների իրավական կարգավիճակի բարելավման հիմնախնդիրները» թեմայով, որի պատվիրատուն ՀՀ սփյուռքի նախարարությունն է:

***Ամբիոնի աշխատանքում տեղ գտած թերությունները, առկա խնդիրները և դրանց լուծման ու բարելավման ուղիները:***

Նպատակահարմար է համակարգված տեսքով առանձնացնել հետևյալ թերություններն ու դրանց բարելավման ուղիները՝

- դրական տեղաշարժ չի նկատվում գիտական հետազոտությունների շրջանակներն ընդլայնելու կտրվածքով, որպես կանոն, դասախոսական կազմը մեծ դժկամությամբ է ձեռնամուխ լինում գիտական աշխատանքների պատրաստմանը,

- բավարար չափով ընդգրկուն չեն ուսանողների մասնակցությամբ արդիական հարցադրումներով բանավեճերը, իսկ այդպիսիք կազմակերպելու դեպքերում մյուս ուսանողների մասնակցությունը բարվոք չէ,

- առանձին առարկաների դասավանդման համար բացակայում են ոչ միայն հայրենական օրենսդրության և պրակտիկայի ուսումնասիրության հիման վրա պատրաստված նորացված դասագրքերը, այլև ուսումնական ձեռնարկները (խոսքը, հատկապես, վերաբերում է «Վարչական պատասխանատվությանը» և «Հանրային ծառայությանը»),

- սակավաթիվ են հիմնարար արդիական հիմնախնդիրների գիտական հետազոտությանը նվիրված կոլեկտիվ աշխատանքները,

- դեռևս համարժեք չէ արձագանքն ակնհայտ անկատար օրենսդրական ակտերի ու իրավակիրառ պրակտիկայի առնչությամբ: Ցավոք, ամբիոնում ևս երբեմն այն ավանդույթն է տիրում, երբ օրենքները քննադատության թիրախ են դառնում ոչ այնքան օրինագծի տեսքով եղած ժամանակ, որքան, երբ արդեն ընդունվում և կիրառման մեջ են դրվում,

- դեռևս ամբողջովին լուծված չէ համալիր դասավանդման բնականոն ընթացքի երաշխավորման համար անհրաժեշտ նյութերի պատրաստման խնդիրը, մասնավորապես, բացակայում են կոնկրետ առարկաների առնչությամբ օրինակելի գործնական խնդիրների ժողովածուները, կոնկրետ գործնական պարապմունքների համար անհրաժեշտ ուսումնական ձեռնարկները և այլն:

Մրանք հիմնական թերություններն են. այլ թերություններն ու բացթողումները կրում են աշխատանքային բնույթ, որոնք սահմանված կարգով քննարկվում և իրենց լուծումն են ստանում ամբիոնի նիստերում՝ աշխատանքային կարգով:

### ***Գիտական և ուսումնամեթոդական հրատարակչությունների ցանկ***

#### **Մենագրություն**

1. Հարությունյան Գ.Գ., Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները Երեւան, անգլերեն, «Նժար», 2017, 564 էջ:

#### **Դասագիրք**

1. Ն. Ա. Այվազյան, Գ. Բ. Դանիելյան, Վ. Ա. Այվազյան, Ռ. Հ. Եղյան, Գ. Գ. Հարությունյան, Ա. Շ. Հարությունյան, Վ. Հ. Հովհաննիսյան, Ա. Ա. Մանասյան, Ս. Վ. Մուրադյան, Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, գիրք երկրորդ, 2016, Դասագիրք բուհերի համար, «Տիգրան մեծ» հրատ., պատ. խմբագիր՝ իրավ.գիտ., դոկ., պրոֆ., Ն.Ա. Այվազյան, Երևան, 2016, 400 էջ:

#### **Ուսումնական ձեռնարկ**

1. ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներն ու դրանց իրացումը (ուղեցույց – ձեռնարկ), Գ. Դանիելյան, Ա. Գյուլումյան, Հ. Նազարյան, Վ. Այվազյան և Հ. Ենգոյան, ընդհանուր խմբագրությամբ Գ. Դանիելյանի, Երևան, 2016, 943 էջ:

#### **Ուսումնամեթոդական ձեռնարկ**

1. Դիտորդական առաքելությունը և դրա իրականացման կարգը ըստ ՀՀ նոր ընտրական օրենսգրքի, սեմինար-քննարկման նյութերի ժողովածու 4 մարտի 2017 թ., Երևան, «Հայրապետ» հրատ., Գ. Դանիելյան, Լ. Հակոբյան և Հ. Ենգոյան, Վ.Դ. Ավետիսյանի խմբագրությամբ, 2017 թ. 80 էջ:

#### **Հոդված**

1. Գ. Բ. Դանիելյան, Իրավունքների իրացման ու պաշտպանության իրավական մշակույթի վերախմաստավորման արդի ուղենիշները, ԼՂՀ դատական իշխանություն, 1(23), Երևան, 2017թ., էջեր 18-27:

2. Գ. Բ. Դանիելյան, Իրավական որոշակիության, իրավունքի անալոգիայի (համանմանության) և իրավական ակտի մեկնաբանության փոխհարաբերության արդի հիմնախնդիրները, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2016 № 2 (20), էջեր 3-17:

3. Գ. Բ. Դանիելյան, ԵԱՏՄ-ի մարմինների որոշումների իրավական արժեքը ներպետական իրավական համակարգում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու (գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան), Երևան, ԵՊՀ հրատ., 2016, էջեր 68-88:

4. Gagik Harutyunyan, Anahit Manasyan, Vardan Poghosyan, Handbuch der Grundrechte in Deutschland und Europa, C.F. Müller; Auflage: 2016, էջեր 813-877:

5. Айвазян В.Н., Принципы конституционализма в экономической системе, ПРАВОВОЕ ГОСУДАРСТВО: теория и практика, № 1 (47) 2017 общественно-политический и научно-правовой журнал, Издается с 2005 года, № 1 (47) 2017), ISSN 2500-0217, էջեր 167-176.

6. A.A. Manasyan, The Two-Party Political System and Perspectives of its Development in the Republic of Armenia 2017, Studia Politologiczne (Политологические исследования), N 44, издается институтом политических наук Варшавского университета, Варшава, 2017, էջեր 300-306:

7. Anahit Manasyan, Gagik Harutyunyan, Vardan Poghosyan, Handbuch der Grundrechte in Deutschland und Europa, C.F. Müller; Auflage: 2016, էջ 813-877:

8. Անահիտ Մանասյան, Սահմանադրության կայունությունը և զարգացումը որպես սահմանադրականության ամրապնդման երաշխիք, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու (գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան), Երևան, ԵՊՀ հրատ., 2016, էջ 89-109:

9. Մանասյան Ա. Ա., Շաթիրյան Է. Է., ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի՝ Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված՝ «օրենքին համապատասխան ստեղծված անկախ և անկողմնակալ մարմնում» ձևակերպման իրավական չափանիշներին համապատասխանեցման հիմնախնդիրը՝ սահմանադրաիրավական նոր կարգավորումների համատեքստում

ԼՂՀ դատական իշխանություն, թիվ 3 (22), 2016, էջեր 14-21:

10. Մանասյան Ա.Ա., Շաթիրյան Է. Է., Խմբային հայցի ինստիտուտն անգլոսաքսոնական և մայրցամաքային իրավական համակարգերում. համեմատական վերլուծություն, ԼՂՀ դատական իշխանություն, թիվ 2 (21), 2016, էջեր 10-17:

11. Գնել Մուղնեցյան, Տիգրան Ավետիսյան, Դատավորի կարգապահական պատասխանատվության սահմանադրաիրավական բնույթը, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2016 № 3 (21), էջեր 25-40:

12. Մ.Մ. Սարգսյան, Վարչապետի նշանակման և Կառավարության կազմավորման իրավական կառուցակարգերի բարելավման հիմնախնդիրը սահմանադրական փոփոխությունների համատեքստում, Դատական իշխանություն, թիվ 1-2/211-212, Երևան, 2017 հունվար-փետրվար, էջեր 28-33:

13. Շաթիրյան Է. Է., Էկոլոգիական իրավունքների պաշտպանության իրավական հիմքերի բարելավման հրամայականը Հայաստանի Հանրապետությունում, Պետություն և իրավունք, N 3 (73), Երևան-2016, էջեր 4-14:

14. Նադդայան Տ.Գ., Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովը որպես խորհրդարանական վերահսկողության կառուցակարգ // Պետություն և իրավունք, Եր., 2017, № 1 (75), էջեր 11-20:



15. Նաղդայան Ս.Գ., Խորհրդարանական վերահսկողության էությունն ու բովանդակությունը // Դատական իշխանություն, Եր., 2017, թիվ 4/214, էջեր 18-23:

16. Նաղդայան Ս.Գ., Պաշտպանության և անվտանգության բնագավառներում ՀՀ Ազգային ժողովի վերահսկողական լիազորությունների սահմանադրաիրավական հիմքերի կատարելագործման որոշ հիմնահարցեր // Արդարադատություն, Եր., 2017, թիվ 2(37), էջեր 53-62:

17. Նաղդայան Ս.Գ., ՀՀ Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովի իրավական կարգավիճակն ու գործունեության կազմակերպումը // Դատական իշխանություն, Եր., 2017, թիվ 3/213, էջեր 18-23:

*ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի  
Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ՝*

*Գ. Դանիելյան*

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի շրջանավարտների  
պետական քննությունների արդյունքների

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունք և քաղաքացիական դատավարություն մասնագիտացմամբ 2017 թվականի պետական քննությունները և դրանց արդյունքներն ընդհանուր առմամբ վկայում են շրջանավարտների պատշաճ պատրաստվածության մասին: Մասնավորապես, ասվածի հիմնավորումն են հանդիսանում ստորև բերված ցուցանիշները:

	áõë³ ÝáÕ	»ñ³¹²³ Ýó	É³í	μ³í³ñ³ ñ	³Ýμ ³í.	ãÇ Ý»ñİ.
<b>ø³Õ³ù³óÇ³İ³Ý Çñ³íáóÝù</b>						
³éİ³	26	-	12	14	-	-
Ñ»é³İ³	30	-	4	17	1	8
¹ÇãÉáÛ³ÛÇÝ ³ßË. ³éİ³	23	14	9	-	-	-
¹ÇãÉáÛ³ÛÇÝ ³ßË. Ñ»é³İ³	2	-	2	-	-	-
<b>ø³Õ³ù³óÇ³İ³Ý ¹³í³íñ.</b>						
³éİ³	34	7	12	15	-	-
Ñ»é³İ³	26	2	2	14	7	1
¹ÇãÉáÛ³ÛÇÝ ³ßË. ³éİ³	15	2	11	2	-	-
¹ÇãÉáÛ³ÛÇÝ ³ßË. Ñ»é³İ³	3	2	1	-	-	-
<b>ø³.Çëñ³İ³Ý Á»½</b>						
ø³Õ³ù³óÇ³İ³Ý Çñ³íáóÝù	8	4	2	2	-	-
ø³Õ³ù³óÇ³İ³Ý ¹³í³íñ.	6	1	1	4	-	-

Ներկայացված վիճակագրական տվյալների համեմատական վերլուծությունը թույլ է տալիս որոշակի եզրահանգումներ անել բակալավրիատում (առկա, հեռակա) և մագիստրատուրայում (առկա) ուսուցման գործընթացի արդյունավետության, ուսանողների որակի և առաջադիմության, ինչպես նաև քննաշրջանի կազմակերպչական մի շարք հարցերի վերաբերյալ: Այսպես՝ իրենց պատրաստվածությամբ առանձնացել են բակալավրիատի առկա ուսուցման շրջանավարտները: Նրանց մեծամասնությունն արժանացել է գերազանց ու լավ գնահատականների, իսկ անբավարար գնահատական չի արձանագրվել: Այդուհանդերձ, հաշվի առնելով գրավոր ընթացակարգի ներմուծումը քննական համակարգ՝ նշված

շրջանավարտների գիտելիքների վերաբերյալ տպավորությունը լիարժեք չէ. հանձնաժողովը, ի տարբերություն նախորդ տարվա, այս տարի մեկ անգամ է հնարավորություն ունեցել բանավոր կարգով ստուգել ուսանողի գիտելիքների և պատրաստվածության մակարդակը: Ինչ վերաբերում է գրավոր քննությանը, ապա այն վերջին ժամանակահատվածում առաջին անգամ էր կիրառվում ավարտական պետական քննությունների ընթացքում և ինչպես ցանկացած նոր երևույթ, ունի իր դրական և բացասական կողմերը, որոնց անդրադարձ կկատարվի հաջորդիվ: Դարձյալ մտահոգող էր բակալավրիատի հեռակա ուսուցման շրջանավարտների որակը: Նրանցից 8-ն արժանացել է անբավարար գնահատականի, իսկ 9-ն ընդհանրապես չի ներկայացել քննության: Քննությանը չներկայանալու փաստը ևս վկայում է հեռակա ուսուցման շրջանավարտների գիտելիքների ցածր մակարդակի մասին, քանի որ, որպես կանոն, չեն ներկայանում քննությանն անպատրաստ ուսանողները, ընդ որում՝ նրանց մի մասը դեռևս նախորդ տարվա շրջանավարտներ են: Ինչպես և նախորդ տարվա հաշվետվությունում էր նշվել՝ անհրաժեշտ է ձեռնարկել լուրջ աշխատանքներ հեռակա ուսուցման ուսանողների գիտելիքների որակը բարելավելու ուղղությամբ՝ ուսուցման ընթացքում ավելի խիստ պահանջներ ներկայացնելով վերջիններիս նկատմամբ:

Ի տարբերություն նախորդ տարվա, այս տարի իրենց մասամբ արդարացրին մագիստրոսները, թեև նրանցից ակնկալիքներն ավելի շատ էին: Մագիստրոսական թեզն իր բնույթով ավելի լուրջ աշխատանք է, և ինչու չէ՝ ապագայում նաև գիտական գործունեություն ծավալելու նախադրյալ կարող է հանդիսանալ: Այս տարի, սակայն, մագիստրոսական թեզերը կատարված ուսումնասիրությունների և արված առաջարկությունների առումով բավականին մակերեսային էին: Այդ են վկայում նաև գնահատման արդյունքները և մասնավորապես՝ բավարար արձանագրված գնահատականների թիվը (6): Այդուհանդերձ, չեմ կարող չառանձնացնել նաև գերազանց գնահատականի արժանացած երկու աշխատանք, որոնք առանձնանում էին և՛ կատարված ուսումնասիրության որակով, և՛ փայլուն պաշտպանությամբ:

Վերոգրյալով հանդերձ, ցանկանում եմ անդրադառնալ նաև այն բացթողումներին, որոնք ի հայտ եկան քննական գործընթացի շրջանակներում.

1) Դեռևս նախորդ տարի հաշվետվություն ներկայացնելիս հարց էր բարձրացվել քննությունների գործող ընթացակարգը բարելավելու ուղղությամբ: Մասնավորապես, արձանագրվել էր, որ քննական գործընթացը կազմակերպված էր այնպես, որ արդյունքում, ըստ էության, ստուգվում էին շրջանավարտների միայն տեսական գիտելիքները, քանի որ քննական հարցաթերթիկը բովանդակում էր չորս տեսական բնույթի հարց, որոնք բավականին ընդհանրական էին և որոշ դեպքերում բավականին փոխկապակցված էին միմյանց: Այս տարի քննական գործընթացում նորամուծություն է կատարվել. ներդրվել է գրավոր ընթացակարգը, որը, ինչպես արդեն նշվեց, ունի և՛ դրական, և՛ բացասական կողմեր: Որպես այս կարգի առավելություն պետք է առանձնացնեմ այն, որ գրավոր ընթացակարգն ուղղված է ուսանողի և՛ տեսական գիտելիքների, և՛ գործնական ունակությունների ստուգմանը: Խնդիրները, ըստ էության, հիմնված էին ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից տարբեր գործերով արտահայտված իրավական դիրքորոշումների վրա, հետևաբար պահանջվում էր նաև ՀՀ վճռաբեկ դատարանի համապատասխան որոշումների իմացություն: Ճիշտ էին ընտրված նաև գնահատման չափանիշները՝ իրավական գիտելիքի, վերլուծական կարողությունների, եզրակացության, շարադրանքի հստակության, ճշտության, տրամաբանական կառուցվածի ստուգում և գնահատում: Գրավոր ընթացակարգն ապահովում է նաև գնահատման գործընթացի օբյեկտիվությունը՝ նկատի ունենալով ստուգման գաղտնիությունը: Այսպես՝ հանձնաժողովը ստուգում և գնահատում է ուսանողի փաստացի աշխատանքը՝ առանց հաշվի առնելու տվյալ ուսանողի առաջադիմությունը կամ այլ սուբյեկտիվ գործոններ: Այս ամենով հանդերձ, հարկ է առանձնացնել որոշ խնդրահարույց տարրեր. նախ՝ խնդիրներն իրենց բովանդակությամբ բավականին բարդ էին, հատկապես քաղաքացիական իրավունքի

մասով, երկրորդ՝ միանշանակ չէին խնդրի լուծման պատասխանները. տիպային լուծումները տարակարծությունների տեղիք էին տալիս նաև քննական հանձնաժողովների անդամների մոտ, և երրորդ՝ ի տարբերություն բանավոր ընթացակարգի, երբ հանձնաժողովը հնարավորություն ունի հարցերի միջոցով <<ուղղորդել>> ուսանողին, որը հարցը ճիշտ չընկալելով, կարող է շեղվել թեմայից, այս ընթացակարգի դեպքում այն բացառվում է: Այդ են վկայում նաև քննական արդյունքները, երբ բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները, որոնք պատշաճ են հանդես եկել ավարտական աշխատանքների պաշտպանության ժամանակ, ստացել են ոչ բարձր գնահատականներ: Կարծում եմ, որ քննական այս համակարգն իրեն կարող է արդարացնել միայն այն դեպքում, երբ ֆակուլտետն ուսումնական գործընթացում հետևողական լինի և ուսուցման գործընթացի վաղ փուլերից (1-ին կուրսից սկսած) շարունակաբար կիրառի նման խնդիրների միջոցով ուսանողների ուսուցման և քննական գործընթացի կազմակերպումը: Հետևողական պետք է լինել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների պարագայում: Ողջունելի է, որ դրանք ներառված են և՛ ուսումնական, և՛ քննական ծրագրերում: Սակայն դա կարող է ցանկալի արդյունք ունենալ միայն այն դեպքում, երբ ուսանողներն իսկապես ծանոթանան և պատկերացում ունենան ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների վերաբերյալ, ինչպես նաև այն դեպքում, երբ այդ ծրագրերը պարբերաբար թարմացվեն ավելի նոր որոշումներով:

2) Նախորդ տարի ևս բարձրացվել էր այն հարցը, որ դիպլոմային աշխատանքները որոշ դեպքերում հանձնաժողովին հնարավորություն չեն տալիս լիարժեք կերպով բացահայտել ուսանողի իրական գիտելիքների մակարդակը: Խնդիրն այս դեպքում կայանում է նրանում, որ դիպլոմային աշխատանք պատրաստած ուսանողը, ի տարբերություն քննություն հանձնողների, սահմանափակվում է որևէ թեմայի ուսումնասիրությամբ և միայն դրա արդյունքում կատարված եզրահանգումների հիման վրա դժվար է միանշանակ որոշել ուսանողի տեսական և գործնական գիտելիքների ծավալը: Որպես խնդրի լուծում<sup>ա</sup> առաջարկվել էր դիպլոմային աշխատանք գրելու հնարավորություն ընձեռել բացառապես բարձր առաջադիմություն (19, 20 միավոր) ունեցող ուսանողներին: Նման պահանջ սահմանելն առաջնահերթ պայմանավորված է այս աշխատանքի բնույթով. այն ենթադրում է տեսական ու գործնական որոշակի ուսումնասիրություն, ուսումնասիրության արդյունքում ի հայտ եկած խնդիրների վերլուծություն ու դրանց լուծման հնարավոր տարբերակների առաջադրում: Այդպիսի վերլուծություն, օբյեկտիվորեն ենթադրվում է, որ կարող են ապահովել ուսման ընթացքում բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները: Որպես այլընտրանքային տարբերակ առաջարկվել էր ոչ բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին ևս թույլատրել պատրաստել ավարտական աշխատանք, սակայն պայմանով, որ այդ ուսանողներն ուսման ընթացքում ցուցաբերած լինեն որոշակի գիտական ակտիվություն (օրինակ<sup>ա</sup> պատրաստել են որակյալ կուրսային, գիտական աշխատանքներ, ունեն հրատարակված գիտական հոդվածներ): Քանի որ նշված առաջարկության արդյունքների վերաբերյալ որևէ տեղեկություն չի ստացվել, այն կրկին պնդում ենք: Միաժամանակ, նշվածից ելնելով՝ անընդունելի ենք համարում դիպլոմային աշխատանքների պաշտպանության ժամանակ բավարար գնահատականների առկայությունը:

3) Գարձյալ անհրաժեշտ է առավել հետևողական լինել ավարտական աշխատանքների որակի և դրանցում արված եզրահանգումների ու առաջարկությունների նկատմամբ: Որոշ աշխատանքներում կատարված եզրահանգումները բավականին պարզունակ էին և ընդհանրապես գուրկ էին գիտականության որևէ հատկանիշից: Որոշ աշխատանքներում էլ այդպիսիք արդեն իսկ շրջանառության մեջ դրված օրինագծերի դրույթների վերարտադրությունն էին՝ որպես սեփական եզրահանգումների, ինչը հատկապես ակնհայտ էր քաղաքացիական դատավարության գծով աշխատանքների պաշտպանության ժամանակ՝ հաշվի առնելով այն, որ շրջանառության մեջ է դրված ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագիծը: Անշուշտ, ողջունելի է, որ ուսանողները տեղեկացված են նախագծից, սակայն նախագծի հիմքում ընկած են նոր

կոնցեպտուալ լուծումներ, որոնք բացակայում են գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում: Հետևաբար, նախագծի առանձին դրույթների վեր հանումը և դրանց հիման վրա գործող օրենսգրքում փոփոխություններ կատարելու առաջարկությամբ հանդես գալը որևէ կերպ չի կարող արդարացված համարվել՝ առանց հարակից ինստիտուտների փոփոխության:

4) Գրականության ցանկերի խնդիրն այս դեպքում ևս արդիական էր: Հղումներում դեռևս գերակշռում էր բավականին հին հրատարակության գրականությունը, իսկ նորօրյա գիտական աշխատանքներին և հատկապես ամերիկյան կամ եվրոպական գրականությանը գրեթե անդրադարձ չկար: Պրակտիկ նյութերի առումով ևս վիճակը նախանձելի չէր. մեծ մասամբ ուսումնասիրության առարկա էին դարձվել ՀՀ վճռաբեկ դատարանի ավելի վաղ շրջանի որոշումները (2008-2012թ.թ.) այն դեպքում, երբ առանցքային նախադեպային նշանակություն ունեցող իրավական դիրքորոշումներ ՀՀ վճռաբեկ դատարանը քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության գծով արտահայտել է հիմնականում վերջին երկու-երեք տարիների ընթացքում կայացված որոշումներում:

Բարձրացված խնդիրների լուծումը, կարծում եմ, հիմնականում վերաբերում է ամբիոնների և գիտական ղեկավարների աշխատանքին: Ամբիոնները պետք է առավել հետևողական լինեն ուսուցման գործընթացն առավելապես գործնական խնդիրների քննարկման և լուծման միջոցով կազմակերպելու գործընթացի նկատմամբ, իսկ գիտական ղեկավարներն էլ իրենց հերթին պետք է հնարավորինս խիստ վերահսկողություն սահմանեն ավարտական աշխատանքների պատրաստման գործընթացի նկատմամբ և չթույլատրեն սահմանված չափանիշներին չհամապատասխանող աշխատանքների պաշտպանությունը:

Այս ամենով հանդերձ<sup>3</sup> պետք է նշեմ, որ քննական գործընթացն ընդհանուր առմամբ անցել է բնականոն մթնոլորտում, իսկ բարձրացված հարցադրումները բացառապես նպատակաուղղված են գործընթացի հետագա արդյունավետության բարձրացմանը:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի շրջանավարտների  
պետական քննությունների արդյունքների

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունք և քրեական դատավարություն մասնագիտացմամբ 2017թ. պետական քննությունները և դրանց արդյունքները ընդհանուր առմամբ վկայում են շրջանավարտների պատշաճ պատրաստվածության մասին: Մասնավորապես, ասվածի հիմնավորում են հանդիսանում ստորև բերված ցուցանիշները:

Քրեական իրավունք Ամփոփիչ ատեստավորման արդյունքներ	ուսա նող	գերա գանց	լավ	բավա րար	անբ ավ.	չի ներկ.
Առկա	42	6	26	9	1	-
Քրեական իրավունք Ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները						
Առկա	9		9	-	-	-
Հեռակա	2		2	-	-	-
Քրեական դատավարություն Ամփոփիչ ատեստավորման արդյունքներ						
Առկա	32	2	14	16	-	-
Քրեական դատավարություն Ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները						
Առկա	18	10	9	-	-	-
Հեռակա	1	-	-	-	-	-
Քրեական իրավունք Ամփոփիչ ատեստավորման արդյունքներ						
Հեռակա	29	2	10	12	5	-

Առկա	2	-	1	1	-	-
Քրեական դատավարություն Ամփոփիչ ատեստավորման արդյունքներ						
Հեռակա	29	3	6	17	3	-
Առկա	3	-	-	3	-	-

Կրիմինալոգի ա մագիստրոսա կան ծրագիր	ուս անող	գերա զանց	լավ	բավ արար	անբ ավ.	չի ներկ.
	6	2	4	-	-	-
Քրեական իրավունք և դատավարություն մագիստրոսական ծրագիր						
	10	7	3	-	-	-

Կարծում եմ, դասախոսական կազմի, ինչպես նաև շրջանավարտների մեծամասնության կողմից ընդգծված բարեխիղճ աշխատանք է կատարվել ինչպես պետական քննություններին պատրաստվելու, այնպես էլ ավարտական աշխատանքների պատրաստման ուղղությամբ:

Ավարտական աշխատանքները աչքի էին ընկնում ինքնուրույնությամբ, ընտրված թեմաներով և՛ քրեական իրավունքի և՛ քրեական դատավարության ոլորտներում անդրադարձ էր կատարվել հիմնական խնդրահարույց հարցերին, ինչը ընդգծում էր թեմաների արդիականությունը: Աշխատանքներում պատշաճ վերլուծություն էր կատարվել հիմք ընդունելով ինչպես գործող օրենսդրությունը, այնպես էլ քրեական իրավունքի և քրեական դատավարության նախագծերը: Ողջունելի էր նաև հեղինակների կողմից սեփական առաջարկությունների, կարծիքների առկայությունը:

Ինչ վերաբերում է պետական քննությունների անցկացման նոր կարգին, ապա նշեմ, որ ընտրված կարգն իրեն արդարացրեց: Ուսանողները գրավոր աշխատանքներում ցուցաբերել են քրեադատավարական և քրեաիրավական նորմերի, ինչպես նաև վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշումների պատշաճ իմացություն:

Այնուամենայնիվ առաջարկում եմ հետագայում մշկել գնահատման առանձին մեթոդ, սահմանելով կոնկրետ չափանիշներ առանձին հմտությունների ցուցաբերման համար, այն է՝ քրեաիրավական և քրեադատավարական նորմերի ճիշտ կիրառման, պատշաճ վերլուծության իրականացման և նախադեպային իրավունքի իմացության համար:

Ինչ վերաբերում է մագիստրոսական թեզերի պաշտպանությանը, ապա անհրաժեշտ է նշել, որ ի տարբերություն ավարտական աշխատանքերի դրանց արդյունքները այնքան էլ գոհացուցիչ չէին ինչպես առկա այնպես էլ հեռակա ուսուցման պարագայում: Աշխատանքների ներկայացման ընթացքում հանգել եմ այն եզրակացության, որ բավարար խորությամբ չէին ուսումնասիրվել հեղինակների կողմից ընտրված թեմաները, աշխատանքներում նկատվում էր գիտականության ցածր աստիճան, ինչ արտացոլվել է աշխատանքների գնահատման վրա: Ավելին, որոշ դեպքերում ավարտական աշխատանքներն իրենց գիտականությամբ գերազանցում էին մագիստրոսական թեզերին: Հետևաբար, մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքում գնահատականները շատ ավելի ցածր էին ի համեմատ նախորդ տարիներին արձանագրված արդյունքների:

Եզրակացնելով նշեմ, որ աշխատանքների ղեկավարները հետագայում պետք է ավելի հետևողական լինեն, որպեսզի ապագայում ներկայացվող աշխատանքները լինեն խորությամբ ուսումնասիրված իսկ դրանցում արվող առաջարկները և հեղինակների կողմից ընտրված թեմաների արդիականությունը՝ գիտականորեն հիմնավորված:

*Պետական քննական  
հանձնաժողովի նախագահ*

*Դ.Մելքոնյան*



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՅԻ**  
**2016-2017 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

2016-2017ու. տարվա ընթացքում ԵՊՀ իրավաբանական կլինիկա են դիմել 40 ուսանող, որոնցից հարցազրույցի հիման վրա ընտրվել են 31-ը՝ 15 ուսանող քրեաիրավական և 16 ուսանող քաղաքացիաիրավական/վարչական մասնագիտացումների շրջանակներում: Կլինիկական դասընթացն ավարտել են 30 ուսանող: 1 ուսանող անձնական պատճառներով հրաժարվել է մասնակցել դասընթացին:

Կլինիկական դասընթացի ավարտին ուսանողները յուրաքանչյուր տարվա նման ստացել են ավարտական վկայականներ, բացի դրանից՝ կլինիկայի 4 ուսանող (Լուիզա Մելիքսեթյան, Արման Ղուկասյան, Արփիսե Առաքելյան, Հովհաննես Հարությունյան) իրենց բարձր պատրաստվածության, բարեխիղճ աշխատանքի, հաճախորդների կողմից շնորհակալական նամակներին արժանանալու և իրավական խնդիրներին տրված արդյունավետ լուծումների համար պարգևատրվեցին ռեկտորատի կողմից շնորհակալագրերով:

2016-2017ու. տարվա առաջին կիսամյակի ընթացքում ուսանողները դասախոս-կոորդինատորների կողմից անցել են համապատասխան դասընթաց, որին զուգահեռ նախորդ տարիների ուսանողների հետ համատեղ նաև տրամադրել են անվճար իրավաբանական ծառայություններ՝ սկսած 2016թ. հոկտեմբերի 7-ից:

Արդեն 2-րդ կիսամյակում իրավաբանական ծառայությունները կլինիկայում տրամադրվել են յուրաքանչյուր աշխատանքային օր՝ սկսած փետրվարի 6-ից, երկուշաբթիից ուրբաթ օրերին ժամը 10:00-ից 16:00 մինչև ս.թ. մայիսի 26-ը ներառյալ: Այդ ժամանակահատվածում ԵՊՀ իրավաբանական կլինիկայի ուսանողները տարբեր իրավական խնդիրներով անվճար իրավաբանական օգնություն են տրամադրել շուրջ 115 անձի: Շուրջ 55 գործ ավարտված է, մնացյալը գտնվում են ընթացքի մեջ: Տրամադրված իրավաբանական ծառայությունները հիմնականում եղել են սեփականության, ժառանգության, աշխատանքային և ապահովահագրության, փոխառության և բանկային պայմանագրերի, մտավոր սեփականության, քրեական գործով պատժաչափի նվազեցման, վարկային պարտավորությունների, խնամակալության, ամուսնալուծման, սնանկության իրավահարաբերությունների վերաբերյալ: Ուսանողների կողմից նախապատրաստվել են հայցադիմումներ, դիմումներ, միջնորդություններ, հարցումներ, վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ, տրամադրվել են իրավունքի վերաբերյալ պարզաբանումներ: Հաշվետու ժամանակահատվածում կլինիկան ստացել է նաև ՄԻԵԴ-ի գանգատ նախապատրաստելու խնդրանք: Դրանց մեծ մասը մերժվել է՝ ՄԻԵԴ դիմելու հիմքերի բացակայության պատճառով,

մեկ գանգատ նախապատրաստվել է, սակայն վերջում հաճախորդի կողմից զարմանալիորեն հետևողականություն չի ցուցաբերվել այն դատարան մուտք անելու հարցում: Որոշ գործերով ուսանողներին հաջողվել է նաև իրականացնել դատական ներկայացուցչություն: Ուսանողների կողմից նախապատրաստվել և օրերս Մարդու իրավունքների պաշտպանին է ուղարկվելու «Սահմանադրական դատարանի մասին» 2006թ. ՀՀ օրենքի ենթադրյալ հակասահմանադրական նորմի սահմանադրականությունը ՀՀ Սահմանադրական դատարանում վիճարկելու վերաբերյալ միջնորդություն:

Կլինիկայի գործունեության վերաբերյալ հասարակության շրջանում իրազեկվածությունը բարձրացնելուն ուղղված տպագրվել են տեղեկատվական բուկլետներ, որոնք բաժանվել են տարբեր պետական և ոչ պետական մարմիններին: Այնուամենայնիվ, հաճախորդների մեծամասնությունը բանավոր պայմանավորվածությունների հիման վրա Իրավաբանական կլինիկա է ուղղորդվել Ֆինանսական համակարգի հաշտարարի և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակներից:

Իրավաբանական կլինիկան այս տարի ևս իրականացրել է «Իրավունք բոլորի համար» ծրագիրը, որին մասնակցելու համար կամավորության սկզբունքով ընտրված կլինիկայի 8 ուսանող անցել են համապատասխան վերապատրաստում կլինիկայի նախկին շրջանավարտ ուսանողների կողմից, այնուհետև այցելել են հանրակրթական դպրոցներ և աշակերտների հետ ինտերակտիվ մեթոդներով անցկացրել են իրավունքի տարբեր բնագավառներին առնչվող դասընթացներ: Այս տարի Իրավաբանական կլինիկայի ուսանողներն այցելել են «Քվանտ» վարժարան, Օշականի Մ.Մաշտոցի անվան միջնակարգ դպրոց, №62, №65 դպրոցներ, ինչպես նաև Իրավաբանական կլինիկան իր հարկի տակ է հյուրընկալել ԵՊԲՀ «Հերացի» ավագ դպրոցի բարձր դասարանների աշակերտներին: Դասավանդման համար ընտրվել են այնպիսի թեմաներ, որոնք առօրյայում հաճախ են հանդիպում, և յուրաքանչյուր ոք կարող է առնչվել դրանց, մասնավորապես, սպառողական իրավունք, աշխատանքային իրավունք, ընտանեկան իրավունք, քրեական իրավունք և այլն:

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ իրավաբանական կլինիկան, համագործակցելով որոշ միջազգային կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների հետ, իրականացրել է տարաբնույթ ծրագրեր:

Մասնավորապես, 2016թ. հոկտեմբերին ԵՊՀ իրավաբանական կլինիկայի ուսանողները մասնակցել են *ՄԱԿ ՓԳՀ-ի, «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի և ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի* կողմից կազմակերպված Փախստականների իրավունքների վերաբերյալ ամառային դպրոցին, որին ներկա էին

նան Գավառի պետական համալսարանի, Գյումրու «Պրոգրես» համալսարանի և Բաց համալսարանի իրավաբանական կլինիկաների ուսանողները: Ամառային դպրոցի ընթացքում քննարկվել են նաև փախստականների իրավունքով մասնագիտացված կլինիկական կրթության վերաբերյալ հիմնահարցեր:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ իրավաբանական կլինիկան շարունակել է համագործակցությունը *«Հայաստանի Հելսինկյան կոմիտե»* իրավապաշտպան հասարակական կազմակերպության հետ, որի շրջանակներում բակալավրիատի 4-րդ կուրսի 3 ուսանող (Աննա Հակոբյան, Դիաննա Մանուկյան, Արփինե Ամիրջանյան) այցելել են «Հրազդան» և «Աբովյան» քրեակատարողական հիմնարկներ և անվճար իրավաբանական խորհրդատվություն են տրամադրել դատապարտյալներին, որի համար ստացել են օրապահիկ: Դատապարտյալներին հիմնականում հետաքրքրել են աշխատանքային, սոցիալական, ամուսնաընտանեկան հարաբերություններից բխող իրենց իրավունքների իրացումը և պաշտպանությունը:

2016-2017 ուս. տարվա շրջանակներում ԵՊՀ իրավաբանական կլինիկան համագործակցել է *Ամերիկյան իրավաբանների ասոցիացայի հետ* «Իրավաբանական աջակցություն Հայաստանում տեղահանված և հակամարտությունից տուժած անձանց համար» ծրագրի շրջանակներում: Ընտրվել են բակալավրիատի 4-րդ կուրսի 2 ուսանող (*Տաթև Գզիրյան, Մարգարիտա Ղազարյան*), որոնք ընթացիկ ուս. տարվա ընթացքում մասնակցել են վերապատրաստման դասընթացների, իսկ այնուհետև խորհրդատվություն են մատուցել տեղահանված և հակամարտությունից տուժած անձանց, որի համար ստացել են կրթաթոշակ:

2016-2017 ուս. տարվա ընթացքում ԵՊՀ Իրավաբանական կլինիկան *«ELSA Armenia» ուսանողական հասարակական կազմակերպության հետ* համատեղ կազմակերպել են «Քննարկում թեյի շուրջ»՝ «Փախստականների և ապաստանի հիմնախնդիրների միջազգային և ներպետական կարգավորումը» թեմայով: Քննարկմանը մասնակցել են իրավագիտության ֆակուլտետի ուսանողները, պրոֆեսորադասախոսական կազմը, միջազգային կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Մասնակից ուսանողները ստացել են վկայագրեր:

Հաշվետու ժամանակահատվածում համագործակցության հուշագիր է կնքվել *«Իրավունքի զարգացման կենտրոն» ՀԿ-ի հետ* «Առողջապահական իրավունք» մասնագիտացմամբ կլինիկական դասընթաց ներառելու վերաբերյալ: Կլինիկայի ուսանողներից մասնակցության հայտ են ներկայացրել 11 ուսանող, որոնք նախապես մասնակցել են «Առողջապահական իրավունք» վերապատրաստման դասընթացին,

այնուհետև այցելել են «Իրավունքի զարգացման կենտրոն» ՀԿ, որտեղ տեղում ծանոթացել են ՀԿ-ի գործունեությանը: «Իրավունքի զարգացման կենտրոն» ՀԿ-ի և ԵՊՀ իրավաբանական կլինիկայի կողմից մշակվել է աշխատանքային ծրագիր, որի հիման վրա սահմանվել է կլինիկայի ուսանողների կողմից «Իրավունքի զարգացման կենտրոն» ՀԿ-ի տարածքում կամ ԵՊՀ իրավաբանական կլինիկայում առողջապահական իրավունքի խախտման հետ կապված խնդիրներ ունեցող հաճախորդներին իրավաբանական խորհրդատվություն տրամադրելու ժամանակացույց:

2016-2017 ուս. տարվա ընթացքում Իրավաբանական կլինիկան «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի հետ համատեղ մասնակցել է ՄԱԿ-ի հայկական ասոցիացիայի կողմից կազմակերպված «Գրեթե տանը» ծրագրին, որի նպատակն էր Հրազդան և Չարենցավան քաղաքներում բնակվող Արցախից տեղահանված ընտանիքներին իրազեկել իրենց հետաքրքրող իրավական խնդիրների վերաբերյալ: Կլինիկայի ուսանողներից կամավորության հիմունքներով ընտրվել են 2 ուսանող (*Տաթևիկ Գզիրյան, Լուսինե Գրիգորյան*), ովքեր «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի ներկայացուցիչների հետ միասին մեկնել են Հրազդան և Չարենցավան քաղաքներ և մասնակցել են կլոր-սեղան քննարկումներին:

ԵՊՀ իրավաբանական կլինիկայի գործունեությամբ հետաքրքրվել են նաև որոշ զանգվածային լրատվամիջոցներ, մասնավորապես ԱԲ հեռուստաընկերությունը և <<Հրապարակ>> օրաթերթը: Վերջինս ցանկություն է հայտնել մեր գործունեությունը առավել հրապարակային դարձնել և հանրությանը իրազեկել նման կառույցի գործունեության վերաբերյալ: Կլինիկան մի քանի գործով աջակցել է օրաթերթին դիմած անձանց իրավական խնդիրներին:

2017-2018 ուս. տարվա համար ԵՊՀ իրավաբանական կլինիկան նախատեսում է շարունակել համագործակցությունը ՄԱԿ ՓԳՀ-ի և «Առաքելություն Հայաստան» բարեգործական ՀԿ-ի հետ, որի շրջանակներում հատկապես քննարկվում է փախստականների իրավունքների պաշտպանության իրավաբանական կլինիկական ծրագիրը զարգացնելու հնարավորությունը: Բացի դրանից արդեն իսկ պայմանավորվածություն է ձեռք բերվել հաջորդ ուսումնական տարվա սկզբին «Փախստականների իրավունք» խորագրով 7-րդ ամառային դպրոցը կազմակերպելու վերաբերյալ:

2017-2018 ուս. տարվա համար ԵՊՀ իրավաբանական կլինիկան նախատեսում է «Իրավունքի զարգացման կենտրոն» ՀԿ-ի հետ շարունակել համագործակցությունը

«Առողջապահական իրավունք» մասնագիտացմամբ կլինիկական ծրագիրը զարգացնելու ուղղությամբ և քննարկել այն ընդլայնելու հնարավորությունը:

Բացի դրանից՝ առաջիկա ուս. տարում նախատեսվում է համագործակցություն սկսել ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հետ և քննարկել «Անչափահասների իրավունքներ» կլինիկական ուղղություն ստեղծելու հնարավորությունը:

**ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ**  
**ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**  
**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ԿԻՍԱՍՅԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

**(2016-2017թթ. ուստարվա 1-ին կիսամյակ)**

**ք. Երևան**

**12 Դեկտեմբերի 2016թ.**

	<b>Միջոցառման բնույթը</b>	<b>Խորագիրը/ Թեման</b>	<b>Անցկացման օրը</b>	<b>Համառոտ նկարագրությունը</b>
	<p align="center">Միջազգային դատախազ</p> <p align="center">(Նյուրեմբերգի իրավաբանական ակադեմիայի հետ համատեղ)</p>	<p align="center">&lt;&lt;Nuremberg mootcourt 2016 &gt;&gt;</p>	<p align="center">հուլիսի 28-30</p>	<p>Ֆակուլտետի ՈԻԳԸ-ն ստանալով դատախազին մասնակցելու հրավերը կազմեց թիմ, ՈԻԳԸ նախագահը դարձավ թիմի ավագ, և դատախազին մասնակցելու աշխատանքներ տարվեցին:</p> <p>Միջազգային մրցույթը ընթացել է երեք խմբային խաղերով: ԵՊՀ թիմը, հանդես գալով երկրորդ խմբում, խաղի արդյունքներով զբաղեցրել է առաջին տեղը՝ անցկացնելով երկու խաղ Գերմանիայի Ռեգենսբուրգ համալսարանի (University of Regensburg) և Ռուանդայի համալսարանի (University of Rwanda) հետ:</p> <p>Բոլոր խմբային խաղերից հետո միավորների ընդհանուր վերջնահաշվարկի արդյունքում ԵՊՀ թիմը մասնակից համալսարանների 32 թիմերի շարքում զբաղեցրել է 9-րդ տեղը: Բացի այդ՝ ԵՊՀ թիմը ներկայացնող Վարդան Հակոբյանը, Լիլիթ Պետրոսյանը և Գևորգ Պողոսյանը ճանաչվել են որպես լավագույն բանախոս:</p>

	<p>Սեմինար («Բեքմեզյան իրավաբանական գրասենյակներ» ընկերության հետ համատեղ)</p>	<p>«Իմացի՛ր իրավունքներդ և պաշտպանի՛ր դրանք իրավաբան ուսանողի օգնությամբ»</p>	<p>Սեպտե մբերի 20</p>	<p>Սեկնարկեց «Իմացի՛ր իրավունքներդ և պաշտպանի՛ր դրանք իրավաբան ուսանողի օգնությամբ» ծրագիրը: Քննարկվեցին այն իրավական խնդիրները, որոնք կուսումնասիրվեն ուսանողների կողմից և որոնց վերաբերյալ կպատրաստվեն տեսանյութեր՝ մինչև 5 րոպե տևողությամբ:</p>
	<p>Ներֆակուլտետ ային սեմինար (Եվրոպական ուսումնասիրությունն երի կենտրոնի հետ համատեղ)</p>	<p>&lt;&lt; ԼՂՀ հակամարտությունը իրավական հարթությունում &gt;&gt;</p>	<p>Հոկտե մբերի 5</p>	<p>Սեմինարի ընթացքում ԵՂՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն, ի.գ.թ., դոցենտ Արթուր Ղազինյանը դարաբաղյան կոնֆլիկտը ներկայացրեց արևմտյան և ռուսական քաղաքանության լույսի ներքո, քննարկվեցին ստեղծված իրավիճակի լուծման իրավական ուղիները:</p>
	<p>Այց, Սեմինար- քննարկում (ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի հետ համատեղ)</p>	<p>«ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարի դերը ՀՀ-ում»</p>	<p>Հոկտե մբերի 10</p>	<p>Ֆակուլտետի շուրջ 30 ուսանողներ այցելեցին ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ: Տեղի ունեցավ քննարկում գրասենյակի աշխատողների հետ գրասենյակի գործառույթների և դերի հետ կապված:</p>
	<p>Միջբուհական սեմինար-քննարկում (Հայաստանում ֆրանսիական համալսարան, ՀՀ ԳԱԱ-ի հետ համատեղ)</p>	<p>«Իրավագիտությունն անգլերենով»</p>	<p>Հոկտե մբերի 13</p>	<p>Այս ծրագրի միջոցով անգլերեն լեզվի իմացությամբ ուսանողների հատուկ խմբի հետ ֆակուլտետի դասախոսները սեմինարներ են ացնկացնում տարբեր իրավական հիմնահարցերի վերաբերյալ: Սեմինարի լեզուն</p>

				անգլերենն է: Տվյալ Սեմինարին Տիրայր Վարդազարյանը ներկայացրեց աշխատանքային իրավունքի հիմնախնդիրները:
	Ներֆակուլտետ ային սեմինար քննարկում	«Քաղաքացիական իրավունքի խնդիրները»	Հոկտե մբերի 13	Սեմինարի ընթացքում քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտը ներկայացրեց քաղաքացիական իրավունք առարկայից խնդիրներ լուծելու հմտությունները:
	Միջբուհական սեմինար-քննարկում (Հայաստանում ֆրանսիական համալսարան, ՀՀ ԳԱԱ-ի հետ համատեղ)	«Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմում ներկայացնելու կարգը և այն կազմելու հմտությունները»	Նոյեմբ երի 4	Փաստաբան Հայկ Ալումյանը ներկայացրեց Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմում ներկայացնելու կարգը և այն կազմելու հմտությունները: Սեմինարին մասնակցեցին նաև ուսանողներ այլ բուհերից:
	Սեմինար	«Գիտական աշխատանք գրելու հմտությունները»	Նոյեմբ երի 4	Ֆակուլտետի դասախոս Տարոն Սիմոնյանը ներկայացրեց գիտական աշխատանք գրելու հմտությունները:
	Այց, սեմինար (ՀՀ արդարադատության ակադեմիայի հետ համատեղ)	«Արդարադատության ակադեմիան և նրա գործառնությունները »	Նոյեմբ երի 16	Ուսանողներն այցելեցին Արդարադատության ակադեմիա, հանդիպեցին ակադեմիայի ռեկտորի հետ, քննարկեցին իրենց հուզող հարցերը:
0.	Նիստ, դերային	«Հայկյան		4-րդ կուրսի 1-ին հոսքի ուսանողներից յուրաքանչյուրը



	խաղ	իրավակարգ-2050»	Նոյեմբերի 17	ներկայացնում էր ապագա Հայաստանի հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքը և մարդկության պատմության տարբեր ժամանակաշրջանների լավագույն մտածողներից մեկին՝ հաշվի առնելով վերջինիս մոտեցումները սոցիալ-քաղաքական և պետաիրավական երևույթների նկատմամբ:
1.	«Ազգային ժողովի նիստ» դերային խաղ	<<ԱԺ նիստ>>	Նոյեմբերի 18	Ուսանողները, ներկայացնելով տարբեր խմբակցություններ, ԱԺ նիստով քննարկեցին օրենքի նախագծեր:
2.	Միջբուհական սեմինար-քննարկում (Հայաստանում ֆրանսիական համալսարան, ՀՀ ԳԱԱ-ի հետ համատեղ)	«The new mind of the lawyer: accelerating changes, conservative regulations and the hope of a better world»	Նոյեմբերի 18	Իրավաբանական անգլերենի հերթական սեմինարի ընթացքում այս անգամ Տարոն Սիմոնյանը խոսեց իրավաբանի դերի մասին:
3.	Այցելություն դատարան (ՀՀ վարչական դատարանի հետ համատեղ)	«Վարչական դատավարությունը ՀՀ-ում»	Նոյեմբերի 18	Ուսանողները այցելեցին ՀՀ վարչական դատարան: Դատարանի դատավոր Ա. Դարբինյանի վարած նիստին ներկա լինելուց հետո, վերջինիս հետ քննարկվեցին որոշ հարցեր
4.	Սեմինար-քննարկում (<<Բրեյվ>> փաստաբանական գրասենյակի հետ համատեղ)	«ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի նախագիծ»	Նոյեմբերի 17	Սեմինարի ընթացքում փաստաբան Վահագն Գրիգորյանը ներկայացրեց նոր օրենսգրքի կարգավորումները:

5.	Նիստ, դերային խաղ	«Հայկյան իրավակարգ-2050»	Նոյեմբերի 22	4-րդ կուրսի 2-րդ հոսքի ուսանողներից յուրաքանչյուրը ներկայացնում էր ապագա Հայաստանի հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքը և մարդկության պատմության տարբեր ժամանակաշրջանների լավագույն մտածողներից մեկին՝ հաշվի առնելով վերջինիս մտեցումները սոցիալ-քաղաքական և պետաիրավական երևույթների նկատմամբ:
6	Միջբուհական սեմինար-քննարկում (Հայաստանում ֆրանսիական համալսարան, ՀՀ ԳԱԱ-ի հետ համատեղ)	«"International child adoption"»	Նոյեմբերի 25	Իրավաբանական անգլերենի հերթական սեմինարի ընթացքում այս անգամ Տաթևիկ Դավթյանը խոսեց որդեգրման միջազգային խնդիրների մասին:
7	Այց, սեմինար (ՀՀ արդարադատության ակադեմիայի հետ համատեղ)	«Արդարադատության ակադեմիան և նրա գործառույթները »	Նոյեմբերի 30	Ուսանողների 2-րդ խումբը կրկին այցելեց Արդարադատության ակադեմիա, նրանք հանդիպեցին ակադեմիայի ռեկտորի հետ, քննարկեցին իրենց հուզող հարցերը:
8	Միջբուհական գիտաժողով (Հայաստանում ֆրանսիական համալսարան, ՀՀ ԳԱԱ-ի հետ համատեղ)	<<Իրավունքի արդի հիմնախնդիրները>>	Նոյեմբերի 28-30	Միջբուհական գիտաժողովի ընթացքում զեկուցումներով հանդես եկան շուրջ 25 ուսանող՝ ԵՊՀ-ից և այլ ԲՈՒՀ-երից:
	Սեմինար			

9	(ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով հետ համատեղ)	<<Հայաստանի Հանրապետության երիտասարդ ընտրող>>	Դեկտեմբերի 1	ԿՐՀ նախագահ Տիգրան Մուկուչյանը ներկայացրեց ՀՀ ընտրական նոր օրենսգիրքը:
0	Այց (Էջմիածնի Գևորգյան ճեմարանի հետ համատեղ)	<<Կրոնը և իրավունքը. հանդիպում Էջմիածնում>>	Դեկտեմբերի 2	Ուսանողներն այցելեցին Էջմիածնի Գևորգյան ճեմարան, քննարկեցին իրենց հուզող հարցերը:
1	Միջբուհական սեմինար-քննարկում (Հայաստանում ֆրանսիական համալսարան, ՀՀ ԳԱԱ-ի հետ համատեղ)	«The theory of constitutional stability in the context of constitutional developments in the Republic of Armenia»	Դեկտեմբերի 6	Իրավաբանական անգլերենի հերթական սեմինարի ընթացքում այս անգամ Անահիտ Մանասյանը խոսեց սահմանադրական բարեփոխումների մասին:
2	Այց, քննարկում	<<ՀՀ ԱԺ-ն>>	Դեկտեմբերի 7	Այցի շրջանակներում ուսանողները հետևեցին ԱԺ աշնանային նստաշրջանի վերջին քառօրյա նիստերի աշխատանքին, ծանոթացել խորհրդարանական առօրյային: Տեղի է ունեցել հանդիպում նաև ՀՀ ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանի հետ, որի շրջանակներում ուսանողները բարձրացրել են հարցեր, որոնք հիմնականում առնչվել են բարեփոխված ՀՀ Սահմանադրության որոշ դրույթների, աղետի գոտու վերականգնման աշխատանքներին, բանակաշինությանը, կրթությանը և:

				երիտասարդությանը հուզող բազմաթիվ այլ խնդիրների:
3	Միջրուհական դատախազ, մրցույթ (IRZ ընկերության հետ համատեղ)	«Քրեական դատավարություն. դատախազ մրցույթ»	Դեկտեմբերի 9-11	ՈԻԳԸ-ն հերթական մրցույթի համար կազմեց երկու թիմ: Հաղթող թիմը ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի թիմն էր, որի բոլոր անդամները ՈԻԳԸ անդամներ են:
4	Միջրուհական սեմինար-քննարկում (Հայաստանում ֆրանսիական համալսարան, ՀՀ ԳԱԱ-ի հետ համատեղ)	«US common law»	Դեկտեմբերի 12	Իրավաբանական անգլերենի հերթական սեմինարի ընթացքում այս անգամ Հայկ Սարգսյանը խոսեց ամերիկյան իրավական համակարգի մասին:

ՈԻԳԸ անդամների ձեռքբերումներ				
	Ձեռքբերում	Քանակ	Ուսանող(ներ)ի տվյալներ	Այլ տեղեկություններ
	Գերմանական IRZ ընկերության և ԵՊՀ իրավ. Ֆակ. կազմակերպած միջրուհական դատախազ-մրցույթ	1	Աննա Հակոբյան	Լավագույն բանախոս
	Միջրուգակա ն գիտաժողով	4	Աննա Հակոբյան Լուիզա Մելիքսեթյան Լիլիթ Պետրոսյան Մերի Մոսիսյան	<<Իրավունքի արդի հիմնախնդիրները>> խորագրով գիտաժողովին զեկուցեցին:
	Լավագույն ուսանող	1	Մերի Մոսիսյան	ԵՊՀ «Լավագույն ուսանող-2016»
	Ասպիրանտների գիտաժողով	1	Լիլիթ Պետրոսյան	Ֆակուլտետում կազմակերպվող ասպիրանտական գիտաժողովին զեկուցում:
	Միջազգային դատախազ մրցույթ	1	Լիլիթ Պետրոսյան	Նյուրեմբերգի դատախազ մրցույթում ճանաչվել է լավագույն բանախոս:

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ԿԻՍԱՍՅԱԿԱՑԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի  
ուսանողական գիտական ընկերության  
(2016-2017 ուստարվա 2-րդ կիսամյակ)

ք. Երևան

«12»

մայիսի 2017թ.

	<b>Միջոցառում ն բնույթը</b>	<b>Խորագիրը / Թեման</b>	<b>Անցկացման ն օրը</b>	<b>Համառոտ նկարագրությունը</b>
1.	Քննարկում («Իրավունք ների տեղեկատվական կենտրոն» ԻՀԿ հետ համատեղ)	<<Ժամկետային ն զինծառայողներին տրամադրվող անվճար իրավաբանական օգնության մատչելիության խնդիրները>>	01.02.2017	Հանդիպման արդյունքում ուսանողները ծանոթացան ժամկետային զինծառայողների մասնակցությամբ քրեական գործերով պաշտպանության իրականացման ՀՀ-ում առկա խնդիրներին:
2.	Այցելություն	<<Դատական նիստ դատավոր Ս. Հովսեփյանի նախագահությամբ>>	24.02.2017	Արարկիր և Քանաքեռ- Զեյթուն վարչական շրջանների դատարանում նախնական դատական նիստում քննվում էր ժառանգության գործով ապացուցման առարկան որոշելու և ապացուցման պարտականությունը բաշխելու հարցը, որից հետո դատավոր Ս. Հովսեփյանը ուսանողներին մանրամասն ներկայացրեց դատաքննության առանձնահատկությունները
3.	Սեմինար- դասընթաց	<<Ինչպես գրել գիտական հոդված>>	06.03.2017	Արդեն ավանդույթ դարձած սեմինարն անցկացրեց

				<p>քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս և ուզը գծով պատասխանատու Ա. Թավադյանը:</p> <p>Ուսանողներին մանրամասն կերպով ներկայացվեցին գիտահետազոտական աշխատանք կատարելու հմտությունները:</p>
4.	<p>Հանդիպում (Քրեական դատավարության ամբիոնի հետ համատեղ)</p>	<p>&lt;&lt;Հանդիպում ՀՀ գլխավոր դատախազի հետ&gt;&gt;</p>	06.03.2017	<p>Գլխավոր դատախազը ուսանողների հետ հանդիպմանը ներկայացրել է դատախազական գործառույթների իրականացման արդյունավետության բարձրացմանը նպաստող օրենսդրական, կազմակերպա-իրավական մեխանիզմների զարգացման ընթացքը և հեռանկարները, պատասխանել է նաև ուսանողների հարցերին, որոնք վերաբերել են դատախազների լիազորություններին, օպերատիվ հետախուզական մարմինների նկատմամբ դատախազական հսկողությանը և դատաիրավական բարեփոխումներին:</p>
5.	<p>Սեմինարների շարք (Քրեական իրավունքի ամբիոնի և IRZ գերմանական հիմնադրամի հետ համատեղ)</p>	<p>&lt;&lt;Պատժի նշանակման հիմնախնդիրները&gt;&gt; թեմայով երկօրյա սեմինար Գերմանիայի Բոննի առաջին ատյանի դատարանի դատավոր Ալեքսանդր Ֆյուլլինգի հետ (երկօրյա)</p>	13-14.03.2017	<p>Երկօրյա դասախոսությունների ընթացքում Ալեքսանդր Ֆյուլլինգը ներկայացրեց պատժի նշանակման ու հետաձգման սկզբունքների, նպատակների, պատժաչափի սահմանման ու դրա հիմքում դրված հանգամանքների, պատժի կատարման պայմանների կասեցման, ինչպես նաև արտասահմանում հանցագործությունների հետապնդման առանձնահատկությունները:</p>

6.	Մեմինար- քննարկում (Արդարադա տության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունն երի կենտրոն» հիմնադրամի հետ համատեղ)	<<Դատական նոր օրենսգրքի նախագծի նորամուծություններ ը>>	14.03.2017	Հանդիպման ընթացքում Արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի ներկայացուցիչները ուսանողներին ծանոթացրեցին օրենսգրքի նախագծի նորամուծություններին, որին հաջորդեց ակտիվ հարցույթատասխանը:
7.	Այցելություն, հանդիպում (Իրավագիտ ության ֆակուլտետի ՈԻԽ և <<Պաշտոնական տեղեկագիր>> ՓԲԸ հետ համատեղ)	<<Իրավական ակտերի հրապարակումը>>	14.03.2017	Հանդիպման ընթացքում ՀՀ իրավական ակտերի պաշտոնական հրապարակամբ զբաղվող <<Պաշտոնական տեղեկագիր>> ՓԲԸ ներկայացուցիչները պատմեցին իրավական ակտերի հրապարակման ողջ գործընթացի մասին:
8.	Հանդիպում- դասախոսություն	<<Վարչական իրավախախտումներ ի վերաբերյալ նոր օրենսգրքի նախագծի հայեցակարգային դրույթները>>	15.03.2017	Հանդիպման ընթացքում ի.գ.դ., պրոֆ. Գ. Դանիելյանը ներկայացրեց ՎԻՎՕ նախագծի հիմնական սկզբունքները և դրույթները:
9.	Մեմինար	<<Ինչպես դիմել ամառային և ձմեռային դպրոցների>>	17.03.2017	Մեմինարի ընթացքում ուսանողները ծանոթացան ամառային և ձմեռային ծրագրերի դիմելու տարատեսակ հնարավորություններին, կայքերին և ծրագրերի դիմում հայտերը լրացնելու և մոտիվացիոն նամակները գրելու հմտություններին:
10.	Մեմինար- քննարկում (անգլերեն լեզվով)	<<The right to apply to the administrative court>>	17.03.2017	Սա ֆակուլտետի համար ավանդույթ դարձած անգլերեն լեզվով հերթական սեմինարն էր, որի ընթացքում ուսանողները քննարկեցին վարչական դատարան դիմելու իրավունքի առանձնահատկությունները:

11.	Մրցույթ	<<Մրցում են առաջին կուրսեցիները. Անգլիական և ֆրանսիական հեղափոխություններ >>	24.03.2017	Առաջին կուրսի ուսանողները թիմային խաղի միջոցով փորձում էին իրենց գիտելիքները անգլիական և ֆրանսիական հեղափոխությունների վերաբերյալ Արտասահմանյան երկների պետության և իրավունքի պատմությունն առարկայից:
12.	Հանդիպում-դատախաղ (ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի կարիերայի կենտրոնի հետ համատեղ)	<<Ֆակուլտետի հյուրերն են աշակերտները>>	27.03.2017	ԵՊՀ Հերացի ավագի դպրոցի պատմաիրավագիտական հոսքի աշակերտները Իրավագիտության ֆակուլտետ կատարած այցի շրջանակներում ծանոթացան ֆակուլտետի պատմության և գործունեության հետ, իսկ Դատական նիստերի դահլիճում իրենց իրավական գիտելիքները փորձեցին ՈւԳԸ կողմից կազմակերպված դատախաղում՝ մրցելով միմյանց միջև:
13.	Հանդիպում-դասախոսություն (ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հետ համատեղ)	<<Երեխաների իրավունքների պաշտպանությունը Լեհաստանում>>. հանդիպում Լեհաստանի Երեխաների իրավունքների պաշտպան Մարեկ Միխալակի հետ	11.04.2017	Հյուրը նախ անդրադարձավ հայտնի մանկավարժ Յանուշ Կորչակի գործունեությանը, ում աշխատությունների բազմաթիվ դրույթներ հիմք են ծառայել ՄԱԿ-ի «Երեխաների իրավունքների կոնվենցիայի» համար: Այնուհետև անդրադարձավ կոնվենցիային, դրա կատարմանն ու այն երկրներին, որոնք այդ կոնվենցիայի անդամ են:
14.	Սեմինար (Պաշտոնական տեղեկագիր ՓԲԸ հետ համատեղ)	<<Ինչ է ARLIS կայքը և ինչպես է այն աշխատում>>	13.04.2017	Ուսանողները ծանոթացան Իրավական ակտերի հրապարակման ARLIS.am կայքին և դրանով արդյունավետ որոնումներ կատարելու հմտություններին:
15.	Այցելություն	Այց ՀՀ Կենտրոնական	19.04.2017	Ուսանողները <<Արժեթղթերը ՀՀ-ում>>



		դեպոզիտարիա և NASDAQ OMX ARMENIA բորսա		առարկայի շրջանակներում ծանոթացան արժեթղթերի կարգավորվող շուկայի օպերատորի՝ Nasdaq OMX Armenia ընկերության և Կենտրոնական դեպոզիտարիայի գործառնություններին:
16.	Դատախաղ	<<Կալանքի միջնորդության քննություն>> Խաղ առաջին	20.04.2017	Երրորդ կուրսի առաջին հոսքի ուսանողները քննում էին կալանքի միջնորդություն՝ դատավոր, դատախազի, պաշտպանի, մեղադրյալի մասնակցությամբ:
17.	Դատախաղ	<<Կալանքի միջնորդության քննություն>> Խաղ առաջին	20.04.2017	Այս անգամ մրցում էին երրորդ կուրսի երկրորդ հոսքի ուսանողները. կրկին քննվում էր կալանքի միջնորդություն:
18.	Հանդիպում- քննարկում (ՀՀ Արդարադատության նախարարության հետ համատեղ)	<< Հանդիպում ՀՀ արդարադատության փոխնախարար Ս. Քրմոյանի հետ. e-draft.am կայքի ներկայացում>>	26.04.2017	Հանդիպման ընթացքում ուսանողներին ներկայացվել է կայքի գործիքակազմը, այն գործնականում կիրառելու հնարավորությունները և պատասխանել ապագա իրավաբանների հարցերին:
19.	Սեմինար- քննարկում (անգլերեն լեզվով)	<<The definition of torture>>	26.04.2017	Հանդիպման ընթացքում ուսանողներին ներկայացվեց խոշտանգման իրավական հասկացությունը և դրա դեմ պայքարին ուղղված միջազգային իրավական կարգավորումները:
20.	Քննարկում (ՀՀ Իրավաբանների միության հետ համատեղ)	<< Տեսակապ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ներկայացուցիչների հետ>>	28.04.2017	Ուսանողները տեսակապի միջոցով քննարկում ունեցան Բրյուսելի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ներկայացուցիչների հետ՝ դատարանի կողմից վերջեր կայացված կարևոր վճիռների վերաբերյալ:
21.	Սեմինար- քննարկում ( ԱՄՆ Պետքարտուղարու	<<Անվճար իրավաբանական օգնությունն ԱՄՆ-ում>>	05.05.2017	Վաշինգտոն քաղաքի «Իրավաբանական օգնություն» կազմակերպության

	թյան՝ Ամերիկյան PFP ծրագրի շրջանակներում )			իրավաբանական տնօրեն Չին Լիի միջոցով ուսանողները ծանոթացան ԱՄՆ-ում անվճար իրավաբանական օգնության (pro bono) դերին և դրա խնդիրներին:
22.	Բանավեճ ռուսերեն լեզվով, (Ռուսական կենտրոնի հետ համատեղ)	<< Տարածքային ամբողջականություն >>	05.05.2017	Թիմերը բանավիճում էին միջազգային իրավունքում հայտնի երկու հակադիր սկզբունքների՝ տարածքային ամբողջականության և ազգային ինքնորոշման սկզբունքների շուրջ:
23.	Ֆիլմի պատրաստում	<<Alexander Lapshin- imprisoned for visiting Kharabakh>>	08.05.2017	ՌԻԳԸ անդամները անգլերեն լեզվով տեսանյութ են պատրաստել, որտեղ դատապարտում և իրավական գնահատական են տալիս Լեռնային Ղարաբաղ այցելած հայտնի լրագրող Ալեքսանդր Լապշինի ձերբակալումն ու կալանավորումը Աղբբեջանում: Ֆիլմը մեծ դիտումներ է հավաքում YouTube-ում: <a href="https://www.youtube.com/watch?time_continue=5&amp;v=Op65AEvzIhg">https://www.youtube.com/watch?time_continue=5&amp;v=Op65AEvzIhg</a>
24.	Գիտաժողով	<<Իրավունքի արդի հիմնախնդիրները>>	10-12.05.2017	Ենթյա գիտաժողովին ներկայացվեցին շուրջ 70 զեկուցումներ, այդ թվում՝ Հայաստանում ֆրանսիական համալսարանից:
25.	Հետազոտական աշխատանք	World Universities Comparative Law Project	23.04.2017-մինչ հիմա	World Universities Comparative Law Project-ը հետազոտական ծրագիր է, որն իրականացվում է Allen and Overy բրիտանական իրավաբանական խոշորագույն կազմակերպության կողմից: Ծրագրին մասնակցում են տասնյակ համալսարաններ՝ աշխարհի բազմաթիվ երկրներից: Հայաստանից ծրագրին մասնակցում և

				ԵՊՀ-ն ներկայացնում է ԵՊՀ իրավագիտության ՈԻԳԸ թիմը, որն ընդգրկվել է հետազոտական աշխատանքներում և բիզնես իրավունքի ոլորտում կատարում է հետազոտական աշխատանք: Աշխատանքը ավարտից հետո հրատարակվելու է Լոնդոնում և հասանելի է լինելու ինտերնետում և տպագիր տարբերակով:
<b>ՈԻԳԸ անդամների ձեռքբերումներ</b>				
	<b>Ձեռքբերում</b>	<b>Քանակ</b>	<b>Ուսանողի տվյալներ</b>	<b>Այլ տեղեկություններ</b>
1.	Հաղթանակ հանրապետական դատախազ-մրցույթում	1	Տիգրան Դադունց, Ելենա Ալեքսանյան,	Ամերիկյան համալսարանի կողմից կազմակերպվող ամենամյա ADR արբիտրաժ խաղ-մրցույթում ԵՊՀ թիմը զբաղեցրեց առաջին տեղը:
2.	Մասնակցություն հանրապետական դատախազ-մրցույթի	1	Լուիզա Մելիքսեթյան, Արփինե Առաքելյան	ՈԻԳԸ անդամները ԵՊՀ մեկ այլ թիմով ևս մասնակցում էին ADR արբիտրաժ խաղ-մրցույթին՝ անցնելով կիսաեզրափակիչ փուլ:
3.	Մասնակցություն միջազգային մրցույթների	2	Լիլիթ Պետրոսյան	Վաշինգտոնում ապրիլի 9-15 տեղի ունեցած Ֆիլիպ Ջեսսփի անվան միջազգային դատախազում Վաշինգտոնում ԵՊՀ-ի թիմը 4 մրցելույթ է ունեցել, որոնցից երեքում հաղթանակ է տարել Եգիպտոսի, Կանադայի և Աֆղանստանի նկատմամբ, իսկ ԱՄՆ-ի թիմին զիջել է միավորների փոքր տարբերությամբ: Երեք խաղերում, սակայն, թիմի անդամները ճանաչվել են լավագույն բանախոսներ: ԵՊՀ թիմն արձանագրել է գոհացուցիչ արդյունքներ՝ զբաղեցնելով 39-րդ տեղը՝ իրենից հետ թողնելով հարևան երկրների թիմերին:

				(Թուրքիա՝ 41-րդ, Վրաստան՝ 43-րդ, Ադրբեջան՝ 118-րդ): ՈԻԳԸ-ն իր ներդրումն է ունեցել թիմի կազմավորման և մասնագիտական պատրաստման աշխատանքներին: Թիմի կազմում էր ՈԻԳԸ նախկին նախագահ Լիլիթ Պետրոսյանը:
			Հարություն Հովհաննիսյան	ՈԻԳԸ անդամ Հարություն Հովհաննիսյանը հուլիսին ԵՊՀ թիմի կազմում մասնակցելու է Նյուրնբերգում կայանալիք՝ միջազգային քրեական իրավունքի դատախազին: Թիմի կազմավորման և մասնագիտական պատրաստման աշխատանքներով գլխավորապես զբաղվում է ֆակուլտետի ՈԻԳԸ-ն:
4.	Գիտական հոդվածների տպագրություն . (ԵՊՀ ՈԻԳԸ գիտական հոդվածների ժողովածու 2016)	3	Տիգրան Դադունց, Լուիզա Մելիքսեթյան, Մերի Մոսինյան	
5.	<<Լավագույն ուսանող>>	1	Լուիզա Մելիքսեթյան	Լ. Մելիքսեթյանը պարգևատրվել է բակալավրի կրթական ծրագրով ՀՀ ԿԳՆ <<Լավագույն ուսանող>> հանրապետական մրցույթի հասարակագիտության ոլորտում 3-րդ տեղը զբաղեցնելու համար
6.	Մասնակցություն գիտաժողովի	5	Լուիզա Մելիքսեթյան, Ռուզաննա Խուդավերդյան, Պետիկ Մկրտչյան, Արփինե Առաքելյան, Վիկտորյա Հակոբջանյան	<<Իրավունքի արդի հիմնախնդիրները>> գիտաժողով

7.	Մասնակցություն համալսարանական, համապետական և միջազգային ծրագրերի	3	Աննա Հակոբյան	<p>Աննա Հակոբյանը ընդգրկվել է ՀՀ արդարադատության ակադեմիայի աշխատանքային խմբում և մասնակցել դատախազների և դատավորների կրթական ծրագրերի բարելավման աշխատանքներին, ինչպես նաև Հելսինկյան կոմիտեի՝ «Անվճար իրավաբանական օգնություն քրեակատարողական հիմնարկներում ծրագրի շրջանակներում մասնակցել դատապարտյալներին անվճար իրավ. օգնություն ցուցաբերելու աշխատանքներին:</p>
			Արփինե Առաքելյան	<p>ELSA (European Law Students Association)-ի կողմից իրականացվող միզբացիոն իրավունքի վերաբերյալ ազգային զեկույց պատրաստելուն ուղղված աշխատանքները համակարգելու համար Արփինե Առաքելյանը ELSA INTERNATIONAL-ի կողմից ընտրվել է որպես ազգային իրավական հետազոտողների թիմի համակարգող:</p>
			Լուիզա Մելիքսեթյան, Աննա Հակոբյան, Արփինե Առաքելյան	<p>Ընտրվել են ԵՊՀ իրավաբանական կլինիկայի կազմում և անվճար իրավաբանական օգնություն են ցույց տալիս ՀՀ քաղաքացիներին:</p>

Ֆակուլտետի ՈԻԳԸ նախագահ՝  
 Ֆակուլտետի ՈԻԳԸ քարտուղար՝

Տ. Դադունց  
 Լ. Մելիքսեթյան